



«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից մշակված
Դիլիջան համայնքի Աղավնավանք և Հաղարծին բնակավայրերում ոռոգման ջրագծի
անցկացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ »
ՊՀ-ի տնօրեն՝

Ա.Եսոյան

ԵՐԵՎԱՆ 2023

ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	Դիլիջան համայնքի Աղավնավանք և Հաղարծին բնակավայրերում ջրագծերի կառուցուման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում
Ծրագրի նպատակը	Համայնքի զարգացման ծրագիր, նպատակը՝ ջրօգտագործման համակարգի բարելավում, ջրային ռեսուրսի կայուն և արդյունավետ օգտագործում
Ծրագրի պատվիրատու/ Ձեռնարկող	«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ ք.Երևան, Տիգրան Մեծ 65Ա
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն	Ք.Երևան, Տիգրան Մեծ 65Ա
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	Հեռ. +374 10 65-16-31, info@cep.am
Պատվիրատու	Արմեն Եսոյան
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	Դիլիջան համայնք, Աղավնավանք և Հաղարծին վարչական միավորներ
Նախատեսվող աշխատանքներ	Ոռոգման ջրագծի կառուցում
Աշխատանքային նախագծի մշակող	«Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներածություն	4
2. Օրենսդրական դաշտ , բնագավառի նորմատիվային ակտերը.....	6
2.1 Բնապահպանական գնահատման մեթոդաբանություն ազգային օրենսդրական դաշտ	8
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	9
3.1. Ընդհանուր տեղեկատվություն.....	9
3.2. Զրապահանջի հաշվարկման նախագծային չափանիշներ.....	15
4. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ.....	18
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ).....	18
5.1 Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ.....	20
5.2 Տեխնիկական միջոցներ.....	22
5.3 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....	24
6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	25
6.1. Ընդհանուր տեղեկություններ ուսումնասիրված տեղամասերի վերաբերյալ.....	25
6.2 Տարածքի աշխարհագրական դիրքը.....	27
6.3. Շրջանի կլիմայական պայմանները.....	28
6.4 Մթնոլորտային օդի որակի բնութագիր.....	37
6.5 Զրային ռեսուրսներ.....	37
6.6 Հողային ռեսուրսներ.....	39
6.7 Անտառ.....	41
6.8. Կենսաբազմազանություն.....	43
6.8.1. Բուսական աշխարհ.....	43
6.8.2. Կենդանական աշխարհ.....	45
6.8.3 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ.....	46
6.8.4 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ.....	47
6.9. Տարածաշրջանի վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	48
6.10. Բնության հուշարձաններ	50
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.....	73
7.1 Օդային ավազանի աղտոտվածություն.....	73
7.2 Մթնոլորտ արտանտվող նյութերի հաշվարկ.....	75
7.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն	78
7.4 Զրոգտագործում, ջրահեռացում	79
7.5 Հողային ռեսուրսներ.....	80
7.6 Թափոններ.....	80
7.7 Սոցիալական ազդեցություն.....	83

7.8 Գումարային ազդեցություն.....	83
7.9 Աշխատողների սանիտարակենցաղային և հիգիենիկ պահանջներ.....	84
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ.....	86
9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	87
9.1 Բնապահպանական և սոցիալական ազդեցությունները.....	87
9.2 Մեղմացման և փոխհատուցման միջոցառումներ.....	90
9.3 Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում.....	95
9.4 Դրական սոցիալական ազդեցություններ	95
9.5 Աշխատանքի անվտանգություն և առողջություն.....	95
9.6 Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմացումը շահագործման փուլում.....	97
10. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	98
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	99
ՊԼԱՆ.....	100
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	107

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ-ի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Աղավնավանք և Հաղարծին բնակավայրերում ջրագծի կառուցման աշխատանքների իրականացման համար կազմվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սույն հաշվետվությունը: «Դիլիջան համայնքի Հաղարծին և Աղավնավանք բնակավայրում ջրագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» առաջադրասնքով նախատեսված նախագծի մշակումը կատարվել է «ԳԼՈՐԱԼ ԻՆՇԵՆԵՐ՝» ՍՊԸ-ի և «ԲԾԻԳ» ՊՀ-ի միջև կնքված՝ N ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՀՁԲ 22/173 ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրի հիման վրա: Նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի եվ համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում» դրամաշնորհային ծրագրը, որը ֆինանսավորվում է ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Հարմարվողականության հիմնադրամի կողմից:

Նախագծով նախատեսված աշխատանքները կիրականացվեն ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի վարչական տարածքում և «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում, ինչը ենթադրում է, որ համաձայն Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին. ՀՀ օրենքի այս նախագծով նախատեսված գործունեությունը կդասվի Բ կատեգորիայի: Ծրագրի նախնական փուլում կազմվել է նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտը, որի փորձաքննության հիման վրա կազմվել է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայել սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության մշակման համար:

Ներկայացվող գործունեության նպատակն է՝ իրականացնել Աղավնավանք և Հաղարծին բնակավայրի ջրամատակարարման պայմանների բարելավում՝ ապահովելով ջրի կայուն և արդյունավետ օգտագործումը: Ծրագրի իրականացման տարածքը գտնվում է Տավուշի մարզ, Դիլիջան համայնքի Աղավնավանք և Հաղարծին բնակավայրերի վարչական տարածքում և մասամբ «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի տարածքում: Նախագիծը համաձայնեցվել է Դիլիջանի համայնքապետարանի և «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի հետ: Աղավնավանք և Հաղարծին բնակավայրերում ջրագծի կառուցման աշխատանքների նախագծման համար հիմք է հանդիսացել Դիլիջան համայնքի ղեկավարի կողմից Ա-11-36, առ 02.06.2023 թվականի նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/: Գրությունը ներկայացված է ՇՄԱԳ-ի հավելվածներում:

Գործունեության իրականացման համար օգտագործվելու են համայնքային նշանակության հողերը, գոյություն ունեցող ասֆալտապատ և գրունտային ճանապարհները: Կառուցվող խողովակաշարերն անցկացվելու են գոյություն ունեցող ճանապարհի հարևանությամբ: Շինարարական աշխատանքների իրականացմանը

խոչընդոտող ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Ծրագրով նախատեսված՝ Աղավնավանք և Հաղարծին բնակավայրերում ջրագծի կառուցման աշխատանքները ներառում են.

- Աղավնավանքում ջրագծի երկարությունը 1,604 կմ է
- Վերակառուցել «Գետիկ գետի վտակ»-ի գլխամասային հանգույցը:
- Վերակառուցել «Գետիկ գետի վտակ»-ի գլխամասային հանգույցից սնվող ոռոգման ջրագծերը:
- Կառուցել ոռոգման ջրագիծ I/1-1 - de110(PE), L=38.0մետր:
- Կառուցել ոռոգման ջրագիծ I/1-2 - de125(PE), L=43.0մետր:
- Կառուցել ոռոգման ջրագիծ I/2 - de90(PE), L=84.0մետր:
- Կառուցել ընդհանուր թվով 43 հատ ջրթող հանգույցներ DN50(ST) պողպատե և de63(PE) պոլիէթիլենե խողովակներով:
- Ջրթող հանգույցի վրա նախատեսված սողնակներից հետո կատարվելիք աշխատանքները սույն նախագծով նախատեսված չեն: Ջրթող հանգույցների միացման կետերի նշակետերը ենթակա են ճշգրտման շինարարության ընթացքում:
Գետիկ գետի վտակը գտնվում է Հայաստանի Տավուշի մարզում: Սկիզբ է առնում Միափորի լեռների հարավային լանջերից և Աղավնավանք գյուղի հարավային մասում միախառնվում մայր գետին: Հանդիսանում է Գետիկի աջ վտակը: Երկարությունը 5,5 կմ է:

Հաղարծինում կառուցվելու է 0,531 կմ երկարությամբ ջրագիծ

- Կառուցել «Սպիտակաջուր վտակի» վրա գլխամասային հանգույցը:
- Կառուցել «Սպիտակաջուր վտակի» գլխամասային հանգույցից սնվող ոռոգման ջրագիծը I/1 - DN100(ST), L=45.0մետր պողպատե, I/1 - de110(PE), L=486.0մետր, պոլիէթիլենե խողովակներով:

Սպիտակաջուր վտակը գտնվում է Հայաստանի Տավուշի մարզում: Սկիզբ է առնում Իջևանի լեռների հարավային լանջերից և Հաղարծին գյուղից 0,5 կմ արևմուտք միախառնվում մայր գետին: Հանդիսանում է Աղստևի ձախ վտակը: Ունի 7 կմ երկարություն:

Ծրագրի իրականացումը խթան կհանդիսանա համայնքի կենսամակարդակի բարելավման և գյուղատնտեսական արտադրության զարգացման համար:

Նախագծի իրականացման համար հիմք են հանդիսացել.

- ✓ պայմանագիր N ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՇՁԲ 22/173,
- ✓ գեոդեզիական հանույթը՝ իրականացված նախագծային կազմակերպության կողմից,
- ✓ ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները՝ իրականացված նախագծային կազմակերպության կողմից,
- ✓ տարածքի կլիմայական բնութագիրը:

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հաղարծին և Աղավնավանք բնակավայրերում ջրագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և գործունեության իրականացման համար ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան մշակվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սույն փաստաթուղթը: Փաստաթուղթը մշակվել է որպես սույն գործունեության բնապահպանական գնահատման ուղեցույց: Այս փաստաթուղթը ներառում է ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները և չափանիշները և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ գործունեության իրականացման բոլոր փուլերում:

2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից: Հաղարծին և Աղավնավանք բնակավայրերի ջրագծի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում:

Բնապահպանական և քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

- Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>>,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)
- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենք (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (1994),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (2014),
- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենք (1998),
- ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, 01.01.2018թ.),
- «ՀՀ Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության

14.08.2008 N 967-Ն որոշում,

- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք 1999թ.,
 - Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենք (2000),
 - ՀՀ հողային օրենսգիրք (2001),
 - Բնապահպանական կրթության մասին ՀՀ օրենք (2001),
 - ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
 - Հայաստանի հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք (2022),
 - ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011),
 - Թափոնների մասին ՀՀ օրենք (2004),
 - Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005),
 - Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք (2006),
 - ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
 - ՀՀ Կառավարության <<Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման եվ անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին>> 30 օգոստոսի 2007 թվականի N 1045-Ն որոշում:
 - ՀՀ Կառավարության <<<Կենդանիների Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 71-Ն որոշում,
 - ՀՀ Կառավարության <<<Բույսերի Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 72- Ն որոշում,
 - <<<Բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին>> ՀՀ Կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշում,
 - Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:
- Հաշվի են առնվել նաև՝
- ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25 որոշումը «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին»,
 - ՀՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 10-ի նիստի «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 որոշում,
 - ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի նիստի «ՀՀ անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումը:
 - «Դիլիջան ազգային պարկի 2017-2026թթ. Կառավարման պլանը և

կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 190-Ն որոշումը, 23/02/2017թ

2.1 Բնապահպանական գնահատման մեթոդաբանություն ազգային օրենսդրական դաշտ

Սույն Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմվել է համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, շրջակա միջավայրին ախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» ՊՈԱԿ կողմից տրամադրված Տեխնիկական առաջադրանքի (SU 50, տրվ.24.07.2023թ.), ինչպես նաև ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 8-րդ մասի՝ «փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 3-րդ մասում չթվարկված բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք իրականացվելու են բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում» դասակարգվում որպես «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ, քանի որ գործունեության տարածքներն առնչվում են բնության հատուկ պահպանվող տարածքների հետ («Դիվիզան ազգային պարկ»):

Հաղարծին և Աղավնավանաք բնակավայրերում ջրագծի կառուցումը՝ որպես նախատեսվող գործունեություն, դասակարգվում է «Բ» կատեգորիայի, քանի որ Ծրագրի տարածքներն առնչվում են բնության հատուկ պահպանվող տարածքների /«Դիվիզան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքների/ հետ: Սույն օրենքը պարունակում է հանրային քննարկումներ կազմակերպելու ընդհանուր դրույթներ, իսկ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014թ նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշումը կարգավորում է հանրային լսումների/ քննարկումների կազմակերպման ընթացակարգը և թիվը, ինչպես նաև սահմանում գործընթացի մեջ ներգրավված կազմակերպությունների/ մասնակիցների դերերը և պատասխանատվությունները: «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների փորձաքննությունը իրականացվում է չորս փուլով՝ պահանջվում է իրականացնել առնվազն 4 հանրային լսում, որոնք անց է կացնում նախաձեռնողը (մեծ մասամբ, նախաձեռնողը նախագծային խորհրդատուն է), փորձաքննություն անցկացնող լիազոր մարմինը կամ տեղական իշխանությունները:

Նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն: Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն ՇՄԱԳ հաշվետվությունում:

Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը: Նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանվում են Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով:

3. ՆԱԽԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

3.1 Ընդհանուր տեղեկատվություն

Աշխատանքային նախագիծը կատարվել է համաձայն.

Ա) պատվիրատուի առաջադրանքի

Բ) գործող շինարարական նորմերի եվ կանոնների

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պատվերով «ԳԼՈԲԱԼ ԻՆՇԵՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից մշակվել է Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի Աղավնավանք և Հաղարծին վարչական միավորներում ոռոգման ջրագծերի կառուցման/վերանորոգման, Հաղարծին վարչական միավորում ջրարբիացման կետի կառուցման աշխատանքներ» աշխատանքային նախագիծը:

Նախագծման աշխատանքների համար հիմք է հանդիսացել Դիլիջան համայնքի ղեկավարի կողմից տրված NU1-29, առ 06.04.2023թ. ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Աղավնավանք վարչական միավոր

Ըստ տեխնիկական առաջադրանքի ոռոգման համակարգերը նախատեսված են իրականացնել պոլիէթիլենե խողովակներով, բացառությամբ առանձին հատվածների, որտեղ ըստ անհրաժեշտության նախատեսված են պողպատե խողովակներ:

Ոռոգման ցանցերի պլանվորման, ջրագծերի հիդրավլիկական և կառուցվածքային պարամետրերը որոշելու համար հաշվի են առնվել առկա խողովակների տրամագծերը, հեռանկարում նախագծվող հողակտորները, ինչպես նաև ոռոգման համակարգին շահագործման ընթացքում ներկայացվող պահանջները:

- Խողովակի թաղման խորությունը ընտրված է համաձայն նորմերի, ըստ որոնց խողովակը պետք է տեղադրվի հողի մակերևույթից 0.6մ խորության վրա միաժամանակ խողովակի վերին շուրթի նիշը ցածր լինի սառեցման խորությունից :
- Ճանապարհների դեպքում՝ համաձայն պոլիէթիլենե խողովակներին ներկայացվող պահանջներին, խողովակի վերին շուրթի նիշը ցածր լինի հողի նիշից 1.0 մետր:
- Հաշվի առնելով պոլիէթիլենե խողովակներին ներկայացվող պահանջները փոքր ճնշման մեծություն ունեցող խողովակներ նախատեսված չեն՝ անկախ

խողովակներում հաշվարկային առավելագույն ճնշման մեծությունից:

Աղավնավանք բնակավայրի ոռոգման համակարգը սպասարկվում է համայնքի կողմից:

Սույն նախագծով ոռոգման ենթակա հողակտորների ոռոգումը իրականացվում է ոչ կանոնավոր ձևով, համակարգը գտնվում է անբավարար վիճակում: Հողատարածքների համար որպես ջրաղբյուր ծառայելու է Գետիկ գետի վտակը: Նախկինում ջրը նդունիչը գործել է ոչ կանոնավոր, իսկ ջրի տեղափոխումը իրականացվել է խողովակներով, ինչպես նաև հողային առուների միջոցով, որոնք տարիների ընթացքում լցվել են և չեն գործում:

Համաձայն հստակեցված առաջադրանքի նախատեսվում է.

- Վերակառուցել «Գետիկ գետի վտակ»-ի գլխամասային հանգույցը:
- Վերակառուցել «Գետիկ գետի վտակ»-ի գլխամասային հանգույցից սնվող ոռոգման ջրագծերը: Ըստ որում նախագծով չի նախատեսվում նախկինում կառուցված և ներկայումս չգործող ջրագծի ապամոնտաժում: Այս աշխատանքները չեն ներառվել նախագծում, քանի որ դա զգալիորեն կբարձրացներ աշխատանքների արժեքը: Որոշ հատվածներում նոր ջրագիծը կկառուցվի նախկինին զուգահեռ:
- Կառուցել ոռոգման ջրագիծ I/1-1 - de110(PE), L=38.0մետր:
- Կառուցել ոռոգման ջրագիծ I/1-2 - de125(PE), L=43.0մետր:
- Կառուցել ոռոգման ջրագիծ I/2 - de90(PE), L=84.0մետր:
- Կառուցել ընդհանուր թվով 43 հատ ջրթող հանգույցներ DN50(ST) պողպատե և de63(PE) պոլիէթիլենե խողովակներով:

Ջրթող հանգույցի վրա նախատեսված սողնակներից հետո կատարվելիք աշխատանքները սույն նախագծով նախատեսված չեն: Ջրթող հանգույցների միացման կետերի նշակետերը ենթակա են ճշգրտման շինարարության ընթացքում:

Ջրագծերը համարակալված են պայմանականորեն, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 1.604 կմ:

Քանի որ, գլխամասային հանգույցի տարածքում, ինչպես նաև ոռոգման ջրագիծ I/1 - ի ՆԿ 0+00 ÷ ՆԿ 4+60 հատվածում մեքենամեխանիզմների հասանելիությունը հնարավոր չէ, ինչպես նաև հնարավորինս բացառելով բնապահպանական ռիսկերը, շինարարական աշխատանքները նախատեսված են իրականացնել ձեռքով: Աշխատանքների ծավալներում ներառված է շինանյութի տեխափոխում ձեռքով՝ աշխատանքներն հնարավոր դարձնելու համար:

Դիլիջան համայնքի Աղավնավանք վարչական միավորում նախագծվող ջրագծի բեկման կետերի կոորդինատները WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով.

	Կոորդինատներ
--	--------------

	X	Y
1	8508950.0323	4509882.3176
2	8508940.8934	4509865.8843
3	8508928.9522	4509853.1089
4	8508906.8315	4509813.3412
5	8508899.0354	4509806.4420
6	8508748.0858	4509767.6122
7	8508688.2196	4509763.5095
8	8508600.9477	4509747.8945
9	8508541.2979	4509729.9037
10	8508500.1480	4509721.7900

Հաղարծին վարչական միավոր

Հաղարծին բնակավայրի ոռոգման համակարգը սպասարկվում է համայնքի կողմից:

Համակարգը գտնվում է բարվոք վիճակում: Ջրաքանակի ավելացման նպատակով Աղստև գետի Սպիտակաջուր վտակի վրա նախատեսվում է ջրընդունիչ կառուցվածք, որից վերցվող ջուրը տրվելու է առկա գծին:

Համաձայն հստակեցված առաջադրանքի նախատեսվում է.

- Կառուցել «Սպիտակաջուր վտակի» վրա գլխամասային հանգույցը:
- Կառուցել «Սպիտակաջուր վտակի» գլխամասային հանգույցից սնվող ոռոգման ջրագիծը I/1 - DN100(ST), L=45.0մետր պողպատե, I/1 - de110(PE), L=486.0մետր, պոլիէթիլենե խողովակներով:

Ջրագիծը համարակալված է պայմանականորեն, որի ընդհանուր երկարությունը կազմում է 0.531 կմ:

Քանի որ, գլխամասային հանգույցի տարածքում, ինչպես նաև ոռոգման ջրագիծ I/1 - ի ՆԿ 0+00 ÷ ՆԿ 4+00 հատվածում մեքենամեխանիզմների հասանելիությունը հնարավոր չէ, իսկ ՆԿ 4+00 ÷ ՆԿ 5+31 - ում մեծ թեքության պատճառով հնարավոր չէ մեխանիզմի աշխատանքը, ինչպես նաև հնարավորինս բացառելով բնապահպանական ռիսկերը շինարարական աշխատանքները նախատեսված են իրականացնել ձեռքով: Աշխատանքների ծավալներում ներառված է շինանյութի տեխափոխում ձեռքով՝ աշխատանքներն հնարավոր դարձնելու համար: Շինանյութի տեղափոխումը տեխնիկայով նախատեսված է մինչ ՆԿ 4+00, որից հետո տեղափոխում ձեռքով դեպի գլխամաս և ջրագծի երկայնքով: Հաշվի առնելով ռելիեֆը, կապալառու կազմակերպությունը պետք է հաշվի առնի շինանյութ տեղափոխող մեքենաների թերբեռնվածությունը:

Դիլիջան համայնքի Հաղարծին վարչական միավորում նախագծվող ջրագծի բեկման կետերի կոորդինատները WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով.

	Կոորդինատներ	
	X	Y
1	8499600.1700	4520040.0800
2	8499579.8336	4520012.6198
3	8499556.1032	4519998.6531
4	8499553.6691	4519988.6750
5	8499543.6704	4519967.0004
6	8499535.5990	4519960.0647
7	8499548.7943	4519943.4745
8	8499568.9851	4519886.0069
9	8499582.3553	4519875.5497
10	8499531.9494	4519843.5968
11	8499559.6531	4519721.1245
12	8499460.9270	4519645.8540

Տավուշի մարզ, Դիլիջան համայնքը սահմանված կարգով կղիմի ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով: Դրական բնապահպանական փորձաքննական եզրակացություն ստանալուց հետո «Դիլիջան» ԱՊ-ի հետ կկնքվի սերվիտուտի պայմանագիր:

Ոռոգման ջրագծերը նախատեսվում է կառուցել Դիլիջան համայնքի Աղավնավանք և Հաղարծին վարչական միավորներում:

Գործունեության նպատակն է կառուցել 100 մմ տրամագծով Աղավնավանք վարչական միավորում 1604 մ երկարությամբ և Հաղարծին վարչական միավորում 531մ երկարությամբ ոռոգման ջրագիծ: Խողովակաշարի խորությունը նախատեսվում է 0,6մ, լայնությունը 0,3մ:

Ընդհանուր 2135 գծամետրից 641 գծամետրը անցնելու է «Դիլիջան» ազգային պարկի տարածքով, ծառաթփային բուսականությունը նախատեսվող գործունեության հատվածում բացակայում է: Նախատեսվող ոռոգման ջրագծերի գլխամասային հանգույցների հատվածները և շարունակությունը մասամբ անցնում են <<Դիլիջան>> ազգային պարկի <<Աղավնավանք տեղամաս>> և <<Հաղարծին տեղամաս>> մասնաճյուղերի տարածքով: Համաձայն «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանի գոտիավորման, 641 գծամետր ոռոգման ջրագծերը կառուցվելու են ազգային պարկի տնտեսական գոտում, իսկ 1494 գծամետրը Աղավնավանք բնակավայրում:

<<Դիլիջան>> ազգային պարկի <<Հաղարծին տեղամաս>> հատվածում ջրագիծը

նախատեսվում է կառուցել տնտեսական գոտու 13-րդ հատվածում:

<<Դիլիջան>> ազգային պարկի <<Աղավնավանք տեղամաս>> հատվածում ջրագիծը նախատեսվում է կառուցել տնտեսական գոտու 4-րդ հատվածում:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի /02.05.2001թ./ 7-րդ գլխի հոդված 19-ի Դիլիջան ազգային պարկի հողերը գործառնական նշանակությամբ հանդիսանում են հատուկ պահպանվող տարածքների հողեր, որոնք ներառում են բնապահպանական, պատմական և մշակութային և այլ նշանակության հողեր, որոնց վրա օրենքով սահմանված կարգով արգելվում է պարկի նպատակային նշանակությանը հակասող գործունեություն:

Դիլիջան համայնքի Աղավնավանք և Հաղարծին վարչական միավորներում անցնող ջրագծերի կառուցման համար նախատեսված տարածքների հողի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ արոտավայր: Ջրագծի անցկացման հատվածներում կբացառվեն որևէ ծառափուտային բուսականության հատումը, շինարարական հրապարակի տեղակայումը, մեքենամեխանիզմների տեղաշարժը կիրականացվեն միայն գոյություն ունեցող գործող ճանապարհներով: Հողային աշխատանքները «Դիլիջան» ազգային պարկի տարածքի տնտեսական գոտում կատարվելու են բացառապես ձեռքով և 21 բանվորի ուժերով: Մեքենաներ կօգտագործվեն միայն բանվորական ուժի և թեթև շինարարական գործիքների տեղափոխման համար: Աղավնավանք բնակավայրի տարածքում կօգտագործվեն համապատասխան շինարարական մեքենաներ և սարքավորումներ, որոնց համար նախատեսվում է ապահովել պատշաճ տեխնիկական հսկողություն:

Խողովակաշարի անցկացման աշխատանքները նախատեսվում է ավարտել 60 օրացույցային օրվա ընթացքում:

Հանվող բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 384,3մ³: Այն տեղում կկուտակվի և կիրականացվի հետլիցք շինարարական աշխատանքները ավարտելուց հետո:

Հողային աշխատանքների ծավալները՝

Հանույթ՝ 384,3 մ³

Հետլիցք՝ 367,5մ³

Շինարարության աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է կազմված լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադից, ներառյալ զոդողներ և բետոնագործներ:

Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի:

- Բետոնագործների օղակ՝ բետոնագործ 2-րդ և 4-րդ կարգի - 4մարդ,
- Պոլիէթիլենե խողովակներ և առանձին հանգույցներ եռակցող օղակ՝ եռակցող IV, V և VI կարգի – 5 մարդ,
- Տրանսպորտային և շին-մոնտաժային աշխատանքների իրականացման տարբեր մասնագիտական անձնակազմ – 5մարդ:

Բանվորների ընդհանուր քանակը, ներառյալ այլ տնտեսություններում աշխատողների կկազմի $(4+5+5) \times 1,5 = 21$ մարդ:

Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրականացվելու է տեղամասի պետի և աշխղեկի կողմից:

3.2 Զրապահանջի հաշվարկման նախագծային չափանիշներ

Զրապահանջի հաշվարկային տվյալների ամփոփ աղյուսակ վերակառուցվող հատվածի համար:

Աղյուսակ 1

Տվյալներ	Միավոր	Քանակը՝2022-ի տվյալներով	Քանակը՝ 25տարվա հեռանկարով
Զրասպառողների քանակը			
Բնակչություն			
Մշտական բնակչություն	բնակիչ	4421	4785
Ժամանակավոր բնակչություն՝ հիմնականի 0%	բնակիչ	150	160
Ընդամենը	բնակիչ	4571	4945
Անասնազվիսաքանակ			
Խոշոր եղջրավոր	գլուխ	939	1240
Զիեր/Ավանակներ	գլուխ	56	84
Մանր եղջրավոր	գլուխ	199	246
Խոզեր	գլուխ	333	461
Թռչուն	թ	2168	2863
Զրապահանջի նորմեր			
Բնակչության օրեկան ջրապահանջը	լ/օր.մարդ	125.0	125.0
Արդյունաբերական/կոմերցիալ ջրօգտագործում (% բնակչության ջրասպառումից)	%		
Անհատական տների տնամերձ հողամասերի ջրում և պահպանում	լ /օր.մարդ	50	50
Խոշոր եղջրավորների համար	լ/օր.գլուխ	70	70
Զիերի համար	լ/օր.գլուխ	70	70
Մանր եղջրավորների համար	լ/օր.գլուխ	7	7
Խոզերի համար	լ/օր.գլուխ	10.5	10.5
Թռչունների համար	լ/օր.գլուխ	0.5	0.5
Զրապահանջ			
Բնակչության համար			
Բնակչի կողմից միջին օրեկան ջրօգտագործումը	մ ³ /օր	552.6	598.1
Արդյունաբերական/կոմերցիալ	մ ³ /օր	11.5	11.5

ջրօգտագործում			
Անհատական տների տնամերձերի օրեկան ջրապառում	մ ³ /օր	221.1	
Գումարային միջին ջրապառումը բնակիչների կողմից	մ ³ /օր	773.7	320.1
Կենդանիների համար			
Խոշոր եղջրավորների ջրապահանջ	մ ³ /օր	65.7	37.8
Ձիերի ջրապահանջ	մ ³ /օր	3.9	3.1
Մանր եղջրավորների ջրապահանջ	մ ³ /օր	1.4	0.8
Խոզերի ջրապահանջ	մ ³ /օր	3.5	5.9
Թռչունների ջրապահանջ	մ ³ /օր	1.1	0.9
Գումարային միջին ջրապահանջը կենդանիների համար	մ ³ /օր	75.6	48.5
Ջրապահանջն ընդամենը	մ³/օր	849.4	369
Ջրակորուստ			
Ջրակորուստ՝ % միջին ջրապահանջից	%	42	30
Ջրակորուստ	մ ³ /օր	348	158
Ընդամենը ջրապահանջ՝ ներառյալ ջրակորուստը			
Միջին օրական պահանջարկը Qavg. Year	մ³/օր	1197,4	527
Օրական անհավասարաչափության գործակից մարդկանց համար Kday,max	-	1,2	1,2
Օրական անհավասարաչափության գործակից խոշոր եղջր. անասունների համար Kday,max	-	1,1	1,1
Առավելագույն օրական ջրածախս Qday,max	մ³/օր	1285	595
Առավելագույն օրականի միջին վայրկենական Q ^{day,max} avg	լ/վրկ	14.87	6.9
Սարքավորումներով հագեցվածությունը հաշվի առնող գործակից α	-	1,3	1,3
Բնակչության քանակը հաշվի առնող գործակից β	-	1,733	1,733
Ժամային անհավասարաչափության գործակից բնակչության համար Khour,max	-	2,25	2,25
Ժամային անհավասարաչափության գործակից կենդանիների համար Khour,max	-	2,50	2,50
Առավելագույն օրվա առավելագույն	լ/վրկ	22.5	13.4

Տվյալներ	միավոր	Քանակը	Քանակը
Ջրապահանջ			
Առավելագույն օրվա ջրապահանջը $Q_{day,max}$	մ ³ /օր	1385	595
Առավելագույն ջրօգտագործման օրվա միջին ժամային ջրապահանջը $Q_{aver,hours}$	մ ³ /ժամ	57.7	24.8
Առավելագույն ջրապահանջի օրվա առավելագույն ժամային ջրապահանջը $Q_{hour,max}$	մ ³ /ժամ	81.1	48.2
Կարգավորման ծավալ W_{reg}			
Ջրընդունիչից ՕԿՁ մատակարարվող առավելագույն ջրաքանակը	լ/վրկ	16.0	6.9
Ջրընդունիչից ՕԿՁ մատակարարվող առավելագույն ջրաքանակը	մ ³ /ժամ	57.7	24.8
KH	-	1.00	1.00
Kir = factor for irregularity of water consumption = $K_{hour,max} = \alpha \cdot \beta$	-	2.25	2.25
$W_{reg} = Q_{day,max} \cdot (1 - KH + (Kir - 1) \cdot (KH / Kir))$ $Kir / (Kir - 1)$	մ ³	403	173
Հակահրդեհային ծավալ W_{fp}			
Հրդեհի մարման ժամանակը	ժամ	3	3
Միաժամանակյա հրդեհների քանակը	հատ	1	1
Հակահրդեհային ջրապահանջ	լ/վրկ	10	10
$W_{fp} = 3 \cdot q + 3 \cdot (Q_{hour,max} - Q_{aver,hours})$	մ ³	178	178
Վթարային ծավալ W_{emerg}			
Վթարի վերացման ժամանակը (n)	ժամ	8	8
$W_{emerg} = n \cdot 0.7 \cdot Q_{aver,hours}$	մ ³	223	139
Օրվա կարգավորման ջրամբարի ընդհանուր ծավալը			
$W_{DRR} = W_{reg} + 2W_{fp} + W_{em.}$	մ ³	904.3	490.3
ՕԿՁ-ի առկա ծավալը	մ ³	0.0	0.0

4. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼ ԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Նախատեսվող գործունեության պլանավորման փուլում դիտարկվել են հետևյալ այլընտրանքային տարբերակները՝

- 1) Զրոյական տարբերակ, այն է՝ չիրականացնել ջրագծի կառուցումը:
- 2) ջրագծի կառուցումը իրականացնել վերգետնյա եղանակով:

4.1 Զրոյական տարբերակ (նախատեսվող գործունեության չեղարկում)

Զրոյական տարբերակի դեպքում աշխատանքային նախագծով նախատեսված գործունեությունը չի իրականացվի: Այս տարբերակը ֆինանսատնտեսական և տեխնիկական իրագործելիության, ինչպես նաև բնապահպանական տեսանկյունից ամենացանկալին է, քանի որ չի պահանջում ֆինանսական լրացուցիչ ներդրումներ և չի հանգեցնում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության առաջացմանը: Սակայն այս տարբերակը ունի սոցիալ-տնտեսական բացասական մեծ ազդեցություն և հետագայում կարող է մեծացնել ճնշումը բնական և գյուղատնտեսական լանդշաֆտների և էկոհամակարգերի վրա: Սոցիալական պայմանների վատթարացումը կնպաստի նաև մարդածին ճնշման ավելացմանը ազգային պարկի վրա:

4.2 Զրագծի վերգետնյա անցկացման տարբերակ

Այլընտրանքային տարբերակներից մեկն է՝ ջրագիծը անցկացնել վերգետնյա եղանակով: Այս տարբերակը ենթադրում է հետևյալ աշխատանքները/միջոցառումները՝

- Մեծածավալ հողային աշխատանքների իրականացում,
- Եռակցման աշխատանքների իրականացում
- Շինարարական աշխատանքների ընթացքում մեծածավալ մարդկային ռեսուրսների և շին. տեխնիկայի օգտագործում,
- Շրջակա միջավայրի զգալի աղտոտում:

Այս տարբերակը ֆինանսատնտեսական տեսանկյունից թանկ է, իսկ տեխնիկական իրագործելիության տեսանկյունից բարդ: Կատարվելու են մեծածավալ հողային աշխատանքներ, որի արդյունքում հանված հողի տեղափոխման, պահման և տարածքի հատկացման համար կպահանջվեն զգալի ֆինանսական միջոցներ: Հետևաբար կարելի է փաստել, որ այս տարբերակը նպատակահարմար չէ իրականացնել:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել Դիլիջանի համայնքային հողերի

տարածքում: Անցկացվող 2135 գծամետր ջրագծերից 641 գծամետրը գտնվում է Դիլիջան ԱՊ-ի տնտեսական գոտում:

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքների իրականացման համար շին. նյութերի ընդունման հարթակների պատրաստում

- աշխատանքների իրականացման հրապարակի գիշերային լուսավորվածություն

- նախատեսվող աշխատանքների արդյունքում առաջացած թափոնների տեղափոխում Դիլիջանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Հիմնական փուլում կատարվելու է Աղավնավանք և Հաղարծին բնակավայրերի ջրամատակարարման համակարգի կառուցում:

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՇՆևԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկական շինարարության մեջ»: Աշխատանքի անվտանգության ապահովման համար կարևորվում է անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման միջոցառումները, այդ թվում՝

- Եթե շինարարության հրապարակում առկա են էլեկտրահաղորդիչ գծեր, ապա ամբարձիչը պետք է տեղակայվի 30մ-ից ոչ մոտիկ ծայրամասային էլ. հաղորդիչ լարից: Եթե անհրաժեշտություն կա աշխատել 30մ-ից պակաս հեռավորության վրա, պետք է ձևակերպել կարգագիր-թույլատվություն, որտեղ նշվում են այդ աշխատանքի անվնաս պայմանները:

- Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե կհայտնաբերվեն ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճոպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:

- Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 50:

- Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին:

«Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի տարածքում շինարարական աշխատանքներն իրականացվելու են հատուկ սկզբունքներով: Շին տեխնիկական շինանութը կմոտեցնի շինհրապարակին մոտ՝ բացառելով ծանր տեխնիկայի շարժը հողային և բուսական ծածկույթի վրա: ԱՊ-ի տնտեսական գոտու տարածքում աշխատանքները իրականացվելու են ձեռքով:

Համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք

ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

Շինարարության տևողությունը

Շինարարության տևողությունը որոշվել է 60 օր: Շինարարության նորմատիվ ժամկետում հաշվի են առնված՝

- նախապատրաստական շրջանի տևողությունը
- նախագծվող օբյեկտի շինարարությունը
- կոմպլեքսային փորձարկումներ, անհրաժեշտ գործարկման և կարգաբերման աշխատանքները:

5.1 Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ համապատասխան շինարարական մեքենաների ու մեխանիզմների կիրառմամբ:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի ջրամատակարարման համակարգերի տարածքներ նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհներով, իսկ շինարարության նյութատեխնիկական մատակարարումն իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:

- հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար նախատեսվում է օգտագործել հարակից տարածքների շինարարական արդյունաբերության հզորությունները:

- առանձին մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:

Հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն երկրաբանական կտրվածքների: Նախատեսվող գործունեության ժամանակ առաջացող թափոնները հիմնականում 4-րդ և 5-րդ դասի են (համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի): Դրանք իրենցից ներկայացնում են շինարարության խառը թափոններ (3990130001005), ոչպիտանի հանույթը և հողային

աշխատանքների դեպքում հողային, ավազային շլամը (3160250004004), փորման աշխատանքներ ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածակագիրը՝ 31401100 08 99 5), որը 5-րդ դասի թափոն է, ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմի կողմից առաջացրած կենցաղային աղբը(ծածակագիրը՝ 91200400 01 00 4):

Հողային աշխատանքների ծավալներն ու առաջացած թափոնների քանակը

Ջրամատակարարման համակարգի անվանումը	Խրամ. քանդման ընդհ. մակերեսը, մ ²	Հանույ թ,մ ³	Ետլիցք մ ³	Ավելցուկային գրունտ, մ ³	Բուսահող, մ ³	Կենցաղային աղբի կանխատեսվող քանակ, կգ
Աղավնավանք և Հաղարծին բնակավայրերի ջրագիծ	640,5	384,3	367,5	16,8	64,1	49,4

Սույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է հողի բերրի շերտի հանում և ժամանակավոր պահեստավորում:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբը և քանդված հանված հողային զանգվածի որոշ մաս՝ մոտ 6 խմ, որը չի օգտագործվելու հետլիցքի նպատակով կտեղափոխվի Դիլիջանի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր, իսկ կենցաղային աղբի տեղափոխման համար կկնքվի պայմանագիր աղբահեռացումն ապահովող համապատասխան կազմակերպության հետ:

Շինարարական աղբի փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել միայն տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնության դեպքում:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Շինարարության և շահագործման փուլում առաջացած կենցաղային աղբը աղբահավաք ծառայության կողմից կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինարարության նորմատիվ տևողությունը, որը այս ծրագրում ընդգրկված ոռոգման բոլոր համակարգերի համար կազմում է ընդհանուր 60օր, որոշվել է հաշվի առնելով օբյեկտների նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագրերն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Այս ժամանակահատվածը ներառում է նաև վեգետացիոն ժամանակահատվածը և շինարարության հնարավոր ընդհատումները՝ պայմանավորված ցուրտ եղանակային պայմաններով:

Շինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում կլինի տեղական համայնքներից ներգրավված համապատասխան որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Ջրամատակարարման համակարգերում շինարարության ընդհանուր ղեկավարությունը կիրականացվի տեղամասի պետերի և աշխղեկների կողմից:

5.2 Տեխնիկական միջոցներ

Ազգային պարկի տարածքից դուրս աշխատանքների կատարման համար նախատեսվում է օգտագործել հետևյալ մեքենաները և մեխանիզմները.

Աղյուսակ 4.2. Հիմնական մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակություն

Հ/Հ	Մեքենաների և մեխանիզմների անվանումը	Մեքենաների մակնիշը և տիպը	Քանակ ը , հատ
1	Ավտոինքնաթափ	բեռնունակ. 7.5տ	2
2	Ավտոմեքենա - խողովակատեղափոխիչ	բեռնունակ. 10տ	1
3	Ավտոբետոնախառնիչ	տարողությունը 2մ ³	1
4	Ավտոամբարձիչ	բեռնունակ. 12տ	1
5	Բուլդոզեր	հզորությունը 96կՎտ	1
6	Էքսկավատոր, ներառյալ նեղ շերտի	0.65մ ³ շերտի տարողությամբ	1
7	Էլ. եռակցող ապարատ	պողպատի համար	2
8	Եռակցող ապարատ	պոլիէթիլենե խողովակների համար	2
9	Ձեռքի տոփանիչ	ցանկացած	3

Ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցուցակ

h / h	Անվանում	Քանակ	Չափեր, մ	Ծախսվող էներգիա կՎտ	Ծանոթագրություն
-------------	----------	-------	----------	---------------------------	-----------------

1	Աշխեկի գրասենյակ	1	8.6 x 3.1	6	կոնտեյներային
2	Գործիքների պահեստ	1	6.7 x 3.0	6	կոնտեյներային
3	Մեխանիկական արհեստանոց	1	7.25 x 2.9	7.2	կոնտեյներային
4	Հանդերձարան չորանոցով	1	6.7 x 3.0	7.22	շարժական
5	Վագոն –ցնցուղարան	1	10.4x3.1	8.4	կոնտեյներային
6	Մեկ տեղանոց զուգարան	1	D 1.3	1	-
7	Վագոն - ճաշարան 12 բանվորի համար	1	10.3 x 3.1	2.8	կոնտեյներային
8	Բուժ. կետ	1	10.0 x 2.4	7.7	կոնտեյներային
9	Կիսածածկ պահեստ	1	10.0 x 5.0		-
10	ՇԷԿ – 30	2	2.3 x0.89		AD-30C-PM1
11	ՇԷԿ – 60	2	2.7 x1.95		AD-50C-P

Ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցուցակը կճշտվի շինարարության ընթացքում:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակահատվածում օգտագործվելու են վերը թվարկված տեխնիկա-տրանսպորտային միջոցները որոնք կարող են լինել կապալառու կազմակերպության միջոցները կամ դրանց բացակայության դեպքում վարձակալվել այլ կազմակերպություններից: Մեքենաների կայանման վայրեր չեն նախատեսվում, քանի որ մեքենաներն աշխատելու են ըստ պահանջի և կայանվելու են գործունեության տարածքներում, շինարարական հրապարակում՝ ճանապարհի եզրին: Այն տարածքներում, որտեղ հնարավոր չի լինի աշխատանքներն իրականացնել շինարարական տեխնիկայի միջամտությամբ՝ կկատարվի առանց դրանց (ձեռքի աշխատանքներ), հիմնականում՝ Դիլիջան ազգային պարկի տարածքում: Ազգայի պարկի տարածքում մեքենաները կայանելու են միայն ճանապարհի երկայնքով՝ բացառելով հողային ծածկույթի վնասումը:

5.3 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Նախատեսվող գործունեության իրականացման համար շինարարական աշխատանքների ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր:

Որպես բնառեսուրս շինարարական աշխատանքների համար օգտագործվում է ջուր:
Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային կարիքների համար:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է համաձայն ՇՆ 2.04.01-25 չափաքանակների:

Օրական, մեկ բանվորին - 25լիտր

Օրական, մեկ վարչական աշխատողին - 16լիտր

Շինարարական անձնակազմը բաղկացած է լինելու 21 հոգուց, այդ թվում՝ 5
ինժեներատեխնիկական աշխատող (ԻՏԱ):

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է՝

$W_{\text{խ.տ.}} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2) \times T$, որտեղ

n_1 – ԻՏԱ աշխատողների թվաքանակն է՝

5 մարդ

N_1 — ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝

0.016 մ³օր/մարդ

n_2 –բանվորների թվաքանակն է՝

16 մարդ N_2 -

բանվորների ջրածախսի նորմատիվն է՝

0.025 մ³օր/մարդ

T - աշխատանքային օրերի թիվն է՝ 60 օր

$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 16 \times 0.025) \times 60 = 28,8$ մ³:

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝ $U_1 = S_1 \times K_1 \times T$,
որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 640,5 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 60

$U_1 = 640,5 \times 0.0015 \times 60 = 58$ մ³/շին. ժամ.

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող շարժական բիոզուգարանից, ինչը աշխատանքների ավարտից հետո ապամոնտաժվելու է: Բիոզուգարանի տեղադրումն ու սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքի տվյալ ոլորտում մասնագիտական ծառայություններ մատուցող կազմակերպություններից մեկի հետ):

Խմելու և կենցաղային ջուրը կապալառուն ձեռք կբերի համապատասխան առևտրային կետերից: Ջրցանի համար նախատեսված ջուրը ձեռք կբերվի պայմանագրային հիմունքներով:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի

Շինարարության տնտեսությունը

Շինարարության ընդհանուր ժամկետը, ներառյալ նախապատրաստական շրջանը կկազմի՝ 2 ամիս ներառյալ վեգետացիոն ժամանակահատվածը և հնարավոր, ձմեռային սուղ պայմաններից ելնելով՝ շինարարության ընդհատումները: Շինարարության ընթացքում կապալառուն վեգետացիոն հատվածը ընդունում է որպես տեխնիկական ընդմիջում:

Աշխատուժի թվաքանակը

Շինարարության աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ, ներառյալ էլեկտրագողողներ և բետոնագործներ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխերի կողմից:

Աշխատուժի ընդհանուր քանակը – 21 հոգի ներառյալ օժանդակ կառույցների աշխատողները

6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

6.1 . Ընդհանուր տեղեկություններ ուսումնասիրված տեղամասերի վերաբերյալ

Հետազոտվող տարածքը աչքի է ընկնում բարդ երկրաբանական կառուցվածքով: Քաղաքի տարածքում և դրա շրջակայքում լայն տարածում են գտել սողանքային երևույթները, սելավները, փլզումները և այլ վտանգավոր երկրաբանական երևույթներ, որոնք բավական մեծ վնաս են պատճառում քաղաքի տնտեսությանը և ռեկրեացիոն համալիրին:

Մորֆոստրուկտուրային տեսանկյունից ուսումնասիրվող տարածքը համարվում է Դիլիջանի իջվածքի հյուսիսային թևի մասը, որն իրենից ներկայացնում է Դիլիջանի գրաբենի հյուսիսային լանջը՝ ունենալով դեպի հարավ նշանակալի թեքություն:

Ուսումնասիրվող տարածքի հյուսիսային մասը սահմանափակվում է Աղստև գետի հյուսիսային վերողողահունային դարավանդներով: Տեղանքի ժամանակակից ռելիեֆի միջին թեքությունը կազմում է 150-250: Տարածքում լայն տարածում ունեն սողանքավտանգ տեղամասերը: Ռելիեֆի բացարձակ նիշերը

տատանվում են 1270 մ-ից մինչև 1380 մ:

Տարածքի գեոմորֆոլոգիական բնութագիրը հիմնականում պայմանավորված է Աղստև գետի հովիտով, որի կառուցվածքը սիմետրիկ է և ունի մոտ ութ դարավանդներ: Ուսումնասիրված տարածքը գտնվում է գետից մինչև 70 – 80մ բարձրության վրա, որտեղ տեղակայված է գետի հինգերորդ դարավանդը: Առաջին դարավանդը զբաղեցնում է գետի ափային մասը (ողողադաշտը) և ունի մինչև 1մ բարձրություն: Երկրորդ դարավանդի բարձրությունը գետի մակարդակից բարձր է մոտ 10-15 մ, երրորդ, չորրորդ և հինգերորդը համապատասխանաբար ունեն 20-40, 40-60 և 60-80 մ բարձրություններ:

Դարավանդների առկայությունը և նրանց ռելիեֆների ձևավորումը պայմանավորված է երկրաբանական գործընթացներով, որոնք տեղի են ունեցել սկսած Էոցենից մինչև ժամանակակից դարաշրջանը ներառյալ: Տարածքում տեղի են ունեցել ակտիվ տեկտոնական պրոցեսներ (վերին օլիգոցեն-ներքին միոցեն), որի ժամանակ առաջացել են զգալի ծալքաձևավորումներ և հզոր հրաբխային ժայթքումներ: Տարածքի ռելիեֆի հետագա ձևավորումը հիմնականում պայմանավորված է էկզոգեն պրոցեսներով: Վերջնականորեն էնդոգեն և էկզոգեն գործոնների բարդ փոխազդեցությունը ձևավորել է տարածքի ներկա ռելիեֆի տեսքը, որտեղ զգալի են նաև սողանքային երևույթների հետևանքները:

Երկրաբանական պայմանները. ուսումնասիրվող տարածքը պատկանում է Կրասնոսելսկ-Դիլիջան սինկլինալային գոտուն, գտնվում է Ձկնագետ-Ֆիոլետով-Վերին Չիչխան անտիկլինալից հյուսիս և հանդիսանում է Շիրակ-Սևան սինկլինորիումի խոշոր կառուցվածքային տարրերից մեկը:

Սինկլինալի առանցքային գիծն ունի հյուսիս-արևմտյան տարածում: Երկրաբանական կառուցվածքում (վերևից ներքև) հանդիպում են չորրորդական և ժամանակակից գետային նստվածքներ: Առաջին հերթին դրանք դարավանդային նստվածքներն են, որոնք զբաղեցնում են գետահովտի տարածքը:

Ավելի խորը հանդիպում են երրորդական (էոցենի) հասակի հրաբխածին ապարներ, որոնք ներկայացված են հիմնականում տուֆաբրեկչիաներով, անդեզիտներով և պորֆիրիտներով: Այստեղ լայն տարածում ունեն այդ ապարների փոփոխված, հողմնահարված և ճեղքավոր տարատեսակները:

Ուսումնասիրված տեղամասում ավելի խորքային ապարները Աղստև-Բլդրան գետերի ջրբաժան հատվածներում ներկայացված են ինտրուզիվ ապարներով, որոնք հատում են էոցենի հրաբխածին համալիրը և ներկայացված են պորֆիրիտներով նրանց տուֆերով և տուֆաբրեկչիաներով:

Տեկտոնական տեսանկյունից ուսումնասիրված տարածքն ունի բավականին բարդ կառուցվածք:

Առանձին մասնագետներ նշում են, որ Աղստև գետի ուսումնասիրված հատվածը պատկանում է լայնածավալ սինկլինալի և կազմված է հիմնականում Էոցենի հրաբխածին ապարներից: Փաստերի առկայությունը, ինչպիսիք են հին

դարավանդների տեղակայումը համեմատաբար բարձր նիշերի վրա, առանձին տեղերում հին թաղված լճային նստվածքները (որոնք տեղակայված են թաղված գոգավորություններում) թույլ են տալիս անել եզրահանգում տեղամասի զգալի տեկտոնական շարժումների վերաբերյալ:

Դրանք տեղի են ունեցել հիմնականում չորրորդական ժամանակահատվածում: Շրջանում հայտնի է նաև զգալի խախտումների համալիր ցանց, որի հիմնական ուղղությունը հանդիսանում է հյուսիս-արևմուտք - հարավ-արևելք ուղղությունը:

6.2 Տարածքի աշխարհագրական դիրքը

Ծրագրի իրականացման տարածքը գտնվում է Տավուշի մարզ, Դիլիջան համայնքի Հաղարծին և Աղավնավանք բնակավայրի վարչական տարածքում և մասամբ «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի տարածքում:

Դիլիջանը տեղակայված է Հայաստանի Հանրապետության հյուսիսային հատվածում՝ Տավուշի մարզի հարավ-արևմուտքում՝ Տավուշի մարզկենտրոն Իջևան քաղաքից 35-40 կմ, մայրաքաղաք Երևանից 96 կմ, Վանաձորից 38 կմ, իսկ Սևանա լճից՝ 33 կմ հեռավորությունների վրա: Դիլիջան քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1100-1300 մետր բարձրության վրա՝ շրջապատված Փոքր Կովկասի լեռնազանգվածներով: Հյուսիս-արևելքում հարում է Բազումի, արևմտյան և հարավ-արևմտյան կողմերից՝ Փամբակի, արևելքից՝ Միափորի և հարավ-արևելքից՝ Արեգունի անտառաշատ լեռներին: Կիրճի լեռնային զանգվածները ծածկված են հարուստ անտառային տարածություններով, որոնք վերջանալով լեռնային կատարներին, փոխարինվում են ալպյան մարգագետիններով: Քաղաքը անմիջապես փռված է Աղստե գետի հովտում:

Դիլիջան քաղաքը հարակից Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղավնավանք և Խաչարձան գյուղերի հետ միասին ընդգրկված է Դիլիջան խոշորացված համայնքի կազմում:

Դիլիջանի բնական լանդշաֆտները հիմնականում ներկայացված են անտառներով: Դիլիջան համայնքի վարչական սահմաններն ընդգրկված են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում, որը Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներից մեկն է: Կառուցապատվող տեղամասի մի մասը գտնվում է «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Նախագիծը համաձայնեցվել է Դիլիջանի համայնքապետարանի և «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի հետ:

6.3 Շրջանի կլիմայական պայմաններ

Շրջանի կլիման բարեխառն է: Դիլիջանն առանձնանում է մեղմ լեռնաանտառային կլիմայով, որին բնորոշ է չոր և տաք եղանակ ամբողջ տարվա ընթացքում:

Տեղումների տարեկան առավելագույն քանակը տատանվում է 35%-ից գարնանը մինչև 12% ձմեռային ամիսներին: Մայիսին տեղումների քանակը հասնում է շուրջ 100 մմ-ի, իսկ հունվարին՝ 12 մմ-ի:

Տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 593 մմ՝

Արևափայլի միջին տարեկան տևողությունը Դիլիջանում կազմում է 2091 ժամ, իսկ օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը կազմում է 73%: Ձյունախախկույթի միջին բարձրությունը 18 սմ է, իսկ առավելագույնը՝ 39 սմ (հյուսիսային լանջերին):

Գերակայում են արևելյան (17%) և հյուսիս-արևելյան (46%) քամիները՝ 2 մ/վրկ միջին տարեկան արագությամբ (նույնն ինչ Երևանում): Ամպրոպներով օրերի քանակը տարվա ընթացքում կազմում է 15-20 (Երևանում՝ 50 - 60):

Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը

Ֆոնային կլիմայական բնութագիրը իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ՝ գ կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից

գ կլիմայի գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից տրված է աղյուսակ 1.1-ում:

Աղյուսակ 2. Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները

Կլիմայի գործոնները	Հարմարավետությունը	Անհարմարավետություն	
		գերտաքացում	սառեցում
1. Օդի ջերմաստիճանը, °C	12-14	24-ից բարձր	30-35, 1.5 մ/վրկ, 25, 2.0 մ/վրկ, -15, 3.5 մ/վրկ քամու դեպքում,
2. Քամու արագությունը, վ/վրկ	0.5-3.0	փոքր 0.5 մեծ 3.0	5-ից մեծ բացասական ջերմաստիճանի դեպքում
3. Հարաբերական խոնավությունը, %	30-70	30-ից փոքր 70-ից բարձր	80-ից բարձր

Դիլիջան քաղաքի օդերևութաբանական պարամետրերը վերցված են

«Շինարարական կլիմայաբանություն» СНиП II-7.01-2011 տվյալների համաձայն:

Աղյուսակ 3. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Բնակավայրի. օդերևութա- բանական կայանի անվանումը	Բարձ- րություն ծովի մակար դակից. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												Միջին տարե- կան. °C	Բացար- ձակ նվազա- գույն. °C	Բացար ձակ առավե- լագույն. °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Դիլիջան	1256	-1.5	-1,0	2.2	7.7	12,0	15.2	18.3	18.1	14.3	9.3	4.3	0.4	8.3	-23	38

Աղյուսակ 4. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութա- բանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %		
	ըստ ամիսների		Միջին ամսական ժամը 15-ին
	Միջին տարե- կան,%		

	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Դիլիջան	63	65	70	72	78	79	77	78	79	78	73	70	74	51	60

Աղյուսակ 5. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութա- բանական կայանի անվանումը	միջին ամսական												Ձնածածկույթ			
	Տեղումների												Տարեկան	Առավելագույն տասնօրյա- կային բարձրու- թյունը ամ- սական	Տարվա մեջ ձնածած- կույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավել- ագույն քանակը մմ
	ըստ ամիսների															
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Դիլիջան	22	30	45	65	106	103	66	51	46	47	36	22	639	53	57	103
	35	33	42	43	58	62	55	47	45	45	49	33	62			

Աղյուսակ 6. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների		
			Միջին արագությունը, ըստ ուղղությունների														
			Հյուսիս-սային (<ս)	Հյուսիս-Արեւելյան (<սԱրև)	Արեւ-վելյան (Արև)	Հարավ-Արեւելյան (<վԱրև)	Հարավ (<վ)	Հարավ-Արևմտյան (<վԱրևմ)	Արևմտյան (Արևմ)	Հյուսիս-Արևմտյան (<սԱրևմ)							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	2	5	100
Դիլիջան	875,6	հունվար	3	19	2	3	22	32	15	4	28	2,1	1,8	4	20	22	24
			1,6	1,7	1,8	2,4	2,	2,5	2,	1,5							
		ապրիլ	4	41	6	4	13	20	9	3	31	2,					
			1,6	2,2	2,0	2,4	2,	2,3	1,6	1,5							
		հուլիս	5	63	10	2	2	7	8	3	42	1,7					
			1,9	2,5	2,4	1,4	1,4	1,3	1,1	1,4							
		հոկտեմբեր	5	46	6	3	10	17	10	3	43	1,5					
			1,7	2,2	1,9	1,7	1,9	1,7	1,4	1,4							

Աղյուսակ 7. Արևափայլի տևողությունը

Բնակավայրի, օդերևութաբա- նական կայանի անվանումը	Տևողությունը ըստ ամիսների, ժամ												Տարեկան գումարային
	Հունվար	Փետրվա	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբ	Հոկտեմբե	Նոյեմբեր	Դեկտեմբե	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Դիլիջան	125	131	155	156	199	222	232	221	181	163	115	112	2012

Աղյուսակ 8. Անարև օրերի քանակը

Բնակավայրի, օդերևութաբա- նական կայանի անվանումը	ըստ ամիսների												Տարեկան
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Դիլիջան	4	6	5	4	2	1	2	2	3	3	6	5	43

Աղյուսակ 9. Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

	Օդի ջերմաստիճանը, °C						Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությու- նը %		Մթնոլորտային տեղումները և գրունտի սառչման խորությունը		Քամի	
	ամենա- ցուրտ օրվա	ամենա- ցուրտ հնգօրյա կի	ամենա- ցուրտ ժամանա- կաշրջանի միջինը	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը	Տևողությունը, օր	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	Տեղումների քանակը նոյմբեր- մարտ ամիսներին, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	Գերակշռող ուղղությու- նը թեկտեմբեր- փետրվար ամիսներին	Միջին արագու- թյուններ րից առավելագույնը ստուդությունների հունվարին մ/վ
Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	ապահովվածությամբ, %					Միջին ջերմաստիճանը ժամանակաշրջանի միջին օրակա						

								ն ջերմաս- տիճանով , ոչ բարձր, °C								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Դիլիջան	-17	-15	-14	-12	-1,8	-23	10,4	7 3	17 8	20 1	63	51	155	47	Հվ	2,8
								- 1,2	1, 7	2, 6						

Աղյուսակ 10. Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումները, մմ		Քամի, մ/վ	
	Ապահովվածությունը, %		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական տատանումը	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	Տեղումների քանակ ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	Տեղումների օրական առավելագույն քանակը	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություն - ներից նվազագույնը ըստ ուղղությունների հոլիսին
	0,95	0,99									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Դիլիջան	24	25	38	24,4	11,7	77	60	484	62	ՀսԱրլ	2,5

6.4. Մթնոլորտային օդի որակի բնութագիր

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի օքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման: Մոնիթորինգի կենտրոնը Դիլիջան քաղաքում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, հետևաբար մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ ՊՈԱԿ կողմից առաջարկած համապատասխան ձեռնարկ-ուղեցույցից: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10-50 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.3 մգ/մ^3 ;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.05 մգ/մ^3 ;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.015 մգ/մ^3 ;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ^3 :

6.5 Զրային ռեսուրսներ /ջրագրություն/

Աղստևը տարածքով հոսող ամենախոշոր գետն է: Այն սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին: Սկզբում մի փոքրիկ առվակ է, սակայն Դիլիջանի մոտ հորդանալով դառնում է ջրառատ գետ: Սնվում է գերազանցապես ձնհալքից և անձրևաջրերից: Վտակներից հայտնի են Գետիկը և Ոսկեպարը, որոնցից առաջինը հոսում է Միափորի և Արեգունի լեռների միջև ընկած կիրճով: Խորությունը մեծ չէ, սակայն վարարումների ժամանակ դառնում է խիստ վտանգավոր: Հովվաջուր, Շտողանաջուր, Հաղարծին և Բլդան գետակները փոքր վտակներ են: Երկարությունը 133 կմ է, այդ թվում Հայաստանում 99 կմ: Զրի ծախսը՝ 8,22 խմ/վ, հոսքը 256 միլիոն խմ: Մինչև Գետիկ վտակին խառնվելն այն հոսում է հարավ-արևելյան ուղղությամբ, սակայն ապա փոխում է իր ուղղությունը դեպի հյուսիս-արևելք, հատում հանրապետության սահմանը և խառնվում Կուր գետին: Աղստևի ամենախոշոր վտակը՝ Գետիկը, հոսում է հարավ-արևելյան ուղղությամբ:

ՀՀ տարածքում Աղստևի վրա կառուցված է Բերքաբերի ջրամբարը, իսկ գետի ստորին հոսանքում՝ Աղստևի ջրամբարը: Գետն իր հոսքի ողջ երկայնքով խիստ աղտոտված է արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով: Կեղտաջրերն առանց մաքրվելու գետն են լցվում կոյուղու համակարգերից և չվերահսկվող աղբյուրներից: Օրական 18.000 մ3 հզորությամբ կեղտաջրերի մաքրման կայանը ներկայումս չի գործում:

Աղստևի հիմնական վտակը Գետիկն է, իսկ Գետիկ գետը (58 կմ երկարությամբ և 586 քառակուսի կիլոմետր ավազանով) սկիզբ է առնում Սևանի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 2620մ բարձրությունից, հոսելով Արեգունու և Միափորի միջլեռնային հովտով: Այն աջ կողմից թափվում է Աղստև գետը՝ Հաղարծին գյուղից 5 կմ ներքև, Աղստևի գետաբերանից 63 կմ հեռավորության վրա:

Գետերը պատկանում են Կուր գետի ավազանին: Հարուստ գետային ցանցը տարածաշրջանի նշանավոր առանձնահատկությունն են: Գետերն ու գետակները տիպիկ լեռնային են, սնվում են ձնհալքից և անձրևաջրերից, ինչպես նաև բազմաթիվ ստորերկրյա աղբյուրներից: Գետերի հիմնական ուղղությունը հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք է: Գետերի մեծ մասը սակավաջուր են, հեղեղները հիմնականում տեղի են ունենում գարնանը՝ առաջացնելով սելավներ: Այս գետերը բնութագրվում են բարձր անկմամբ և թեքություններով, արագ հոսքով, քարի և ավազի բարձր պարունակությամբ, ինչպես նաև լեռնային գետերին բնորոշ ջրվեժներով և սահանքներով: Դիլիջան ազգային պարկը հայտնի է իր հանքային աղբյուրներով: Հատկանշական են Թթուջուրը (Գետիկ գետի հովտում), Մարգահովիտը (հարուստ է երկաթով), Ֆիոլետովոն (հարուստ է ածխածնով և կալցիումով) և Բլդանի աղբյուրները (որոնք հայտնի են «Դիլիջան» բրենդավորմամբ): Հիդրո- կարբոնատներով հարուստ այս ջրերը օգտագործվում են աղեստամոքսային հիվանդությունների բուժման համար: Պարկը հայտնի է նաև իր լճակներով, որոնցից ամենամեծն ու ամենահայտնին Արեգունի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին՝ 1400մ բարձրության վրա գտնվող Պարզ լիճն է, որն ընկած է Դիլիջան քաղաքից 8 կմ հյուսիս-արևելք: Պարզ լիճը

գրադեցնում է 2 հա մակերես, երկարությունը 250մ է, լայնությունը՝ 70մ, միջին խորությունը՝ 6մ, ջրի ծավալը՝ 83,8 հազ. մ3, իսկ ջրհավաք ավազանը՝ 1,52 կմ2: Հաջորդը՝ Գոշալիճն է (Տգրկա), որը գտնվում է Պարզ լճից արևելք՝ ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա: Այն ունի 56մ երկարություն և 270մ լայնություն, մակերեսը 1,53 հա է, ջրբաժան հատվածի մակերեսը՝ 1,34 կմ2 է, իսկ միջին խորությունը՝ 6մ: Պարկում կան նաև մի քանի փոքրիկ լճակեր:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է «Հիդրոոգերնությաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ:

2021 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 16%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 36%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 26%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 22%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

Դիտարկվող տարածքը գտնվում է Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքում:

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև և ներքև գնահատվել է

«միջակ» (3-րդ դաս), Դիլիջան քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով և կախութային չոր նյութերով, Դիլիջան քաղաքից ներքև՝ նաև բարիումով: Իջևան քաղաքից վերև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով և կախութային չոր նյութերով: Իջևան քաղաքից ներքև ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով, երկաթով, բարիումով և կախութային չոր նյութերով²:

«Դիլիջան» ԱՊ-ի /ԴԱՊ-ի/ գետերը պատկանում են Կուր գետի ավազանին: Հարուստ գետային ցանցը տարածաշրջանի նշանավոր առանձնահատկությունն է: Գետերն ու գետակները տիպիկ լեռնային են, սնվում են ձնհալի և անձրևաջրերից, ինչպես նաև բազմաթիվ ստորերկրյա աղբյուրներից: Գետերի հիմնական ուղղություններն են հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք: Գետերի մեծ մասը սակավաջուր են, հեղեղներ հիմնականում տեղի են ունենում գարնանը՝ առաջացնելով սելավներ: Այս գետերը բնութագրվում են բարձր անկմամբ և թեքություններով, արագ հոսքով, քարի և ավազի բարձր պարունակությամբ, ինչպես նաև տարբեր վայրերում առկա ջրվեժներով և սահանքներով, ինչպես բնորոշ է լեռնային գետերին:

Ծրագրով նախատեսված աշխատանքները չեն կարող ազդել ջրային ռեսուրսների որակական և քանակական ցուցանիշների վրա:

6.6

Հողային ռեսուրսներ

Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գերակշռում են հիմնականում երկու հողատիպեր՝ անտառային և լեռնամարգագետնային: Անտառային գոտում գերակշռում են անտառային շականագույն հողերը, որոնք աչքի են ընկնում բարձր հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Ողջ անտառային գոտում հանդիպում են կարբոնատներով հարուստ, ապարների վրա զարգացած՝ տափաստանացված շականակագույն հողերը, մոզայիկ կառուցվածքով: Գործունեության ենթակա տարածքների հողային տիպը անտառային մուգ դարչնագույն, չափավոր խոնավ հողերն են:

ԴԱՊ-ի հողային ծածկույթը ներկայացված է հիմնականում երկու հողատիպերով՝ անտառային և լեռնամարգագետնային: Անտառային գոտում գերակշռում են շագանակագույն և դարչնագույն անտառային հողերը, որոնք աչքի են ընկնում հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Այս հողատեսակները հիմնականում ձևավորվում են բարձր խոնավությամբ, կայուն ջերմաստիճան ունեցող տարածքներում:

Դարչնագույն անտառային հողերը գերակշռում են համեմատաբար տաք շրջաններում՝ մինչև 1500մ բարձրության վրա խոնավության տարբեր պարունակությամբ, կաղնու և բոխու անտառածածկի առկայության դեպքում: Հողը ձևավորող հիմնական քարերն են կրաքարը, դոլոմիտները և պորֆիրները (marlstones, dolomites, porphyries): Այս հողերին հատուկ է բարձր կլանողականությունը, չեզոք կամ շատ թեթև արտահայտված ալկալինային ռեակցիաները և լավ արտահայտված կարբոնիտային շերտը: Այս հողերին բնորոշ է դարչնագույն կամ մուգ շագանակագույն երանգավորումը, ինչպես նաև հումուսով հարուստ հողերին հատուկ հատիկավոր կառուցվածքը և կավով հարուստ միջին շերտը: Հողի այս տեսակը բաժանվում է երեք ենթատեսակների՝ լվացվող (առանց կրաքարի), տիպիկ (մասնակի լվացվող) և կարբոնատ, որն իր հերթին բաժանվում է մարգագետնային, կրային, կավային և այլ հողատիպերի:

Շագանակագույն անտառահողերը հանդիպում են հյուսիսային լանջերին՝ մինչև 1800մ բարձրության վրա, հիմնականում բոխու և հաճարենու անտառներով ծածկված տարածքներում: Լվացման և կավի կուտակման գործընթացները նպաստում են այս հողերի կազմավորմանը, որն ունի կմախքանման կառուցվածք և առանձնանում է ժայռային բեկորների մեծ քանակությամբ: Ամբողջ հողային կառուցվածքին բնորոշ է շագանակագույն գունավորումը և թույլ գոտիավորումը: Առանձնացվում են երկու ենթատիպեր՝ ցածր և բարձր հագեցվածությամբ հողային շերտեր: Ցածր հագեցվածությամբ հողերն ավելի հզոր են, մինչդեռ հողի երկու ենթատեսակներում էլ հիդրոլիտիկ թթվայնությունը բարձր է:

Երբ էրոզիոն ճնշումը ցածր է, շագանակագույն հողերն իրենց տեղը զիջում են սև հողերին, որոնք ձևավորվում են 1700-1800մ բարձրության վրա՝ անտառային վեգետացիայի անկման հետևանքով, իսկ ավելի բարձր տեղանքներում՝ լեռնամարգագետնային հողերին: Անցումային հողերը, որոնք անտառային

շագանակագույնից անցնում են լեռնամարգագետնայինի, հիմնականում ձևավորվում են ավելի բարձր բաշխման գոտում՝ գերազանցապես ենթալպյան գոտում: Այս հողատեսքերը հանդիպում են հարուստ խոտածածկով նոսր անտառներում: Կարբոնատով և հումուսով հարուստ հողերը ձևավորվում են կարբոնատով հարուստ հիմնահողերում: Սրանք, տափաստանային շագանակագույն հողերի հետ մեկտեղ, խճանկարի պես տարածվում են անտառային գոտով մեկ:

Լեռնամարգագետնային սև հողերը ձևավորվում են ենթալպյան գոտում՝ 2400մ բարձրության վրա: Հողի այս տեսակը ձևավորվում է խոնավության բարձր աստիճանի և թույլ գոլորշիացման պայմաններում, ինչպես նաև հացազգի և տարախոտային բույսերի առկայության դեպքում: Հողերին բնորոշ է լվացման ռեժիմը, ինչպես նաև ճիմահողը, իսկ չքաքայված հատվածներում դրանք ունեն հումուսի հաստ շերտ (մինչև 40սմ): Այս հողերը ընդհանուր առմամբ հարուստ են ազոտով, ֆոսֆորով և ազատ երկաթով: Հետագայում կարող են առանձնացվել մասնատված, ճիմահող-տորֆային, ճիմահողային և թույլ ճիմահողային հողի ենթատեսակներ: Մանրախճային, թույլ զարգացած և մակերեսային հողերը բավականին տարածված են:

Ալլուվիալ հողերը տարածված են ԴԱՊ-ի տարածքում գտնվող համեմատաբար լայնարձակ հովիտներում, որոնց բնորոշ է բերրիության բարձր մակարդակը, և որոնք վերածվում են մշակովի հողերի: Փլուզումները, սելավները, սողանքները և լանջային այլ երևույթները հաճախ են հանդիպում պարկի տարածքում:

Հայաստանի հյուսիսարևելյան շրջանները, ներառյալ Աղստև գետի ավազանը, աչքի են ընկնում սողանքների թվով և ինտենսիվությամբ: Սողանքները մեծապես ազդում են ռելիեֆի ձևավորման վրա: Բավարար խոնավությունը, բարձր զառիթափերի առկայությունը, գրունտային ջրերը, նախալեռների լվացումը, ուժեղ նստվածքները, ակտիվ տեղումները և այլ գործոններ նպաստում են սողանքների առաջացմանը: Մարդածին գործոնները, հատկապես անօրիանական ծառահատումը, լանջերի գերխոնավեցումը, շինարարական աշխատանքները, պայթեցումները և հողային աշխատանքները ևս նպաստում են սողանքների ակտիվացմանը: Խոշոր սողանքների վայրեր են Դիլիջանը, Հաղարծինը, Պարզ լիճը, Ֆիոլետովոն և այլն: Սողանքները տարածված են հատկապես Դիլիջան քաղաքում:

Հյուսիսային լանջերին կլիմայական պայմանները ավելի բարենպաստ են, վեգետատիվ ծածկը՝ ավելի հարուստ, իսկ սելավները՝ հազվադեպ: Սելավները առաջանում են առատ տեղումների ժամանակ (անձրև կամ կարկուտ), երբ կարճ ժամանակահատվածում բարձր քանակով տեղումներ են լինում:

ԴԱՊ-ի տարածքին բնորոշ են թույլ հողմահարումները, էրոզիոն գործընթացները և փարթամ վեգետատիվ ծածկը: Կլիմայական պայմանների անապատացման միտումները, անտառային ծածկի կրճատումը, ինչպես նաև ջրառատ անձրևների ակտիվությունը, բնական լանդշաֆտների խախտումը, էրոզիոն գործընթացները և մարդածին գործողությունները նպաստում են սելավների ակտիվացմանը:

2022 թվականի 2-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Տավուշի,

Կոտայքի, Արարատի, Վայոց ձորի և Լոռու մարզերում: Տավուշի մարզում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.3 անգամ, պղնձի պարունակությունը՝ 14.7-35.0 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.9-8.4 անգամ, քրոմի պարունակությունը՝ 7.3-16.2 անգամ, նիկելի պարունակությունը՝ 8.0-10.3 անգամ և արսենի պարունակությունը՝ 4.0-19.5 անգամ:

6.7 Անտառ

Տարածաշրջանի բուսականության գերիշխող տիպը անտառայինն է: Այստեղ գերակշռում են սաղարթավոր տերևաթափ տեսակները՝ արևելյան հաճարենին (*Fagus orientalis*), վրացական կաղնին (*Quercus iberica*), խոշորառեչ կաղնին (*Q. macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), դաժին կամ արևելյան բոխին (*C. orientalis*): Սրանց ուղեկցում են դաշտային (*Acer campestre*), սրատերև (*A. platanooides*) և բարձրլեռնային (*A. trautvetteri*) թխկիները, լորենին (*Tilia caucasica*), հացենին (*Fraxinus excelsior*), արոսենին (*Sorbus aucuparia*, *S. graeca*) և այլն: Հանդիպում են նաև վայրի պտղատուներ՝ կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), սալորենին (*Prunus divaricata*), մամխենին (*P. spinosa*), ընկուզենին (*Juglans regia*), սովորական տխլենին (*Corylus avellana*), հոնին (*Cornus mas*), սզնու տարբեր տեսակներ (*Crataegus*), զկեռենի (*Mespilus germanica*), թխենի (*Padus*) և այլն: Հարուստ է նաև հատապտղատուների բազմազանությունը՝ հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus caesius*), մորի (*R. idaeus*), կոկոռշենի (*Grossularia*) և այլն: Անտառի վերին սահմանը եզրափակում են կեչու կորաբուն մերձալպյան նոսրանտառային մնացորդները՝ ելունդավոր և թավոտ կեչիների (*Betula pendula*, *B. pubescens*), կաղամախու (*Populus tremula*), այծուռենու (*Salix caprea*) գերակշռությամբ: Հիմնական անտառկազմող ծառատեսակների գերակշռությամբ ծառուտները ներկայացվում են կամ միատարր կաղնուտների, հաճարկուտների և բոխուտների ձևով, կամ էլ խառը՝ դրանց տարբեր խմբավորումների տարբերակներով: Անտառային էկոհամակարգերը ըստ ուղղաձիգ բարձունքային գոտիականության և դիրքադրության ունեն հետևյալ տարածվածությունը: Միջին անտառային գոտու հարավահայաց լեռնալանջերին տարածվում են վրացական կաղնու, իսկ հանդիպակաց հյուսիսհայաց լանջերին՝ արևելյան հաճարենու անտառային զանգվածները: Դրանից վեր, սկսած 1500 մ բարձրությունից, անտառային գոտին ներկայացնում է խոշորառեչ կաղնին: Բոխին հանդիպում է գրեթե բոլոր տիպի ծառուտներում: Ընդ որում՝ արևելյան բոխին (դաժին), որպես կանոն, հանդիպում է ստորին անտառային գոտու (մինչև 1500 մ) ենթանտառում, իսկ կովկասյան բոխին՝ մինչև 2000 մ:

«Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերին բնորոշ է ասեղնատերև ծառատեսակների առկայությունը: Սոճին (*Pinus sosnowskyi*) որոշ տեղերում առաջացնում է խիտ ծառուտներ, հանդիպում է Արեգունի և Փամբակի լեռանշղթաների լանջերին, մասնավորապես՝ Դիլիջանի լեռնանցքի ոլորանի շրջանում: Հանդիպում է նաև Դիլիջան քաղաքային բնակավայրի և մերձակա լանջերին: Մեծ հետաքրքրություն

են ներկայացնում գիհու նոսրանտառները, որոնք տարածված են Գետիկի հովտում, ինչպես նաև Իջևանի լեռնաշղթայի հյուսիսային հովտահայաց չոր լանջերին: Լավ պահպանված գիհուտներ կան հատկապես Աբեղաքար սարի, Աղստև գետին հովտահայաց, Ժայռոտ լանջերին: Գիհու նոսրանտառները ներկայացնում են բազմապտուղ (*Juniperus polycarpus*) և սրաթեփուկ կամ գարշահոտ (*J. foetidissima*) գիհիները: Պարկի տարածքում աճում են նաև գիհու թփային տեսակները՝ երկարատերև (*J. oblonga*) և ցածրած (*J. depressa*):

Բուսականության այլ տիպերը ներկայացված են փոքր կղզյակներով՝ անտառային բացատներում կամ անտառի վերին սահմանից վեր:

«Դիլիջան» ազգային պարկի ստորին հատվածում (մինչև 1100 մ բարձրության վրա) փոքր տարածքներով հանդիպում են շիբլյակ կոչված թփուտները, ուր գերիշխում են ցաքի փշոտ (*Paliurus spina-christi*) և չորասեր թփերի մի քանի այլ տեսակներ՝ ծորենի սովորական (*Berberis vulgaris*), չմենի ամբողջաեզր (*Cotoneaster integerrimus*), մասրենի շան (*Rosa canina*), փոշնի կովկասյան (*Celtis caucasica*), դժնիկ Պալլասի (*Rhamnus pallasii*) և այլն: Այս համակեցություններում խոտային ծածկույթը շատ բազմազան է և ներկայացված է հիմնականորեն չորասեր խոտաբույսերով: Այստեղ հանդիպում են նաև տափաստանային բուսականության փոքր կղզյակներ բոտրիոխլոայի (*Bothriochloa ischaemum*) գերակայմամբ, որոնք հիմնականում երկրորդային ծագում ունեն: Անտառազուրկ ոչ մեծ տարածքներում հանդիպում են այս շրջանի համար ոչ բնորոշ շյուղախոտ վալեսյանի (*Festuca valesiaca*) գերակշռությամբ տափաստանային խմբավորումները, որոնց կազմում բավականին շատ են մարգագետնային բուսատեսակները: (1800)- (1900) մ-ից բարձր տարածված են մերձալպյան մարգագետինները, ուր գերիշխում են խառը տարախոտ- հացազգային համակեցությունները: Հիմնական գերակշռող տեսակներն են բարակոտնուկ սանրանմանը (*Koeleria cristata*), դաշտավլուկ մարգագետնայինը (*Poa pratensis*), դաշտավլուկ կաղնուտայինը (*Poa nemoralis*), ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), խմբախոտ բուրավետը (*Anthoxanthum odoratum*), ոսկեվարսակ սիբիրյանը (*Trisetum sibiricum*) և այլն: Այստեղ տարածված են համակեցություններ, ուր գերակայում են վարդակակաչ փնջածևը (*Anemone fasciculata*), ձկին գորտնուկանմանը (*Trollius ranunculinus*) և կեղծ դանձլամեր սպիտակը (*Veratrum album*), ընդ որում՝ վերջինի տարածումը ուղղակիորեն կապված է արածեցման ինտենսիվության հետ: Մերձալպյան գոտու որոշ հատվածներում տարածված են մերձալպյան բարձրախոտերի համակեցությունները, որտեղ ներկայացված են շուշան հայկականը (*Lilium armenum*), ընձախոտ արևելյանը (*Aconitum orientale*), զիվան հսկայական (*Cephalaria gigantea*), ոգնախոտ կծկավորը (*Dactylis glomerata*), զանգակ խմբվածը (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկը (*Betonica macrantha*) և այլն: «Դիլիջան» ազգային պարկի տարածքի ծորերի Ժայռոտ հատվածներում ներկայացված է ինտրազոնալ Ժայռային բուսականությունը, որի կազմում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում պտերների մի քանի տեսակներ՝ բանպոտ Բռաունի (*Polystichum braunii*), բասբայջ սովորական (*Polypodium vulgare*), ասպլենի (*Asplenium*) որոշ

տեսակներ: Ազգային պարկի տարածքում գտնվող լճերի և գետերի ափերին ներկայացված է ջրաճահճային բուսականությունը, որի կազմում են հիմնականում Հայաստանի համար սովորական տեսակներ՝ ուռենի (*Salix*), բարդի (*Populus*), բոշխ (*Carex*), գորտնուկ (*Ranunculus*), կնյուն (*Juncus*) ցեղերի ներկայացուցիչներ:

6.8.Կենսաբազմազանություն

6.8.1. Բուսական աշխարհ

Դիլիջան համայնքի տարածքը գտնվում է բուսական Կովկասյան պրովինցիայում՝ Իջևանի շրջանում: Դիլիջան քաղաքային բնակավայրում և մոտակայքում բույսերի էնդեմիկ տեսակներ չեն հայտնաբերվել: Այստեղ տարածված են կաթնափուշ բժավոր (*Sylibum Marianum*) բուսատեսակներ: Դիլիջանում տարածված են դեղաբույսեր՝ ալոնների մուգ արնագույն և այլ տեսակներ (*Crataegus Atrosanguinea*), գետնամորի անտառային (*Fragaria Vesca*):

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1200 տեսակ, որից 977 տեսակը աճում է պարկի տարածքում: Դրանցից 51-ը ծառատեսակներ են, 47-ը՝ թփեր, 696-ը՝ բազմամյա խոտաբույսեր, 176-ը միամյա և երկամյա բույսեր, 7-ը մակաբույծներ: Նշված տեսակներից 7-ը հանդիսանում են Հայաստանի էնդեմիկներ: Պարկի պահպանական գոտում հանդիպում են անոթավոր բույսերի 958 տեսակներ (դրանցից 225-ը չեն հանդիպում ազգային պարկի տարածքում): Պահպանական գոտում (Աղստև գետի ձորի լանջերի բաց տեղանքներում) աճում է ևս մեկ էնդեմիկ տեսակ՝ Պսեֆելուս Փամբակի (*Psephellus pambakensis*), որը բավականին լայն տարածում ունի Լոռիում և Իջևանում: Ազգային պարկի ֆլորայի 17 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Ազգային պարկի ֆլորայի 54 տեսակներ հանդես են գալիս որպես դեղաբույսեր: Դրանց մի մասը չեն կազմում խիտ պոպուլյացիաներ, այլ ցրված հանդիպում են ազգային պարկի տարածքում և այդ պատճառով ներկայումս տնտեսական հետաքրքրություն չեն ներկայացնում, իսկ 41 տեսակներ ուտելի են:

«Դիլիջան» ազգային պարկի տարածքից և դրա պահպանական գոտուց հայտնաբերվել են 480 տեսակի և ենթատեսակի սնկեր, որոնցից 320-ը պատկանում են ագարիկալ սնկերին, 124-ը՝ աֆիլոֆորայիններին և 36-ը՝ գաստերոմիցետներին: Առավել տարածված են դառնամատիտեղ (*Russula*), կաթնասունկ (*Lactarius*), սարդոստայնասունկ (*Cortinarius*), թելիկասունկ (*Inocybe*), ճանճասպան (*Amanita*) ցեղերի միկորիզագոյացնող տեսակները, ինչպես նաև բնափայտ քայքայող ականջասունկ սովորական (*Pleurotus ostreatus*), կոճղասունկ իսկական (*Armillaria mellea*) տեսակները և Աբեթասնկեր (*Polyporaceae*) ընտանիքի ներկայացուցիչները: Նշված սնկերից 176-ը ուտելի են, որոնցից առավել տարածված է և վաճառվում է շուկաներում միայն ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*) տեսակը: 38 տեսակի սնկեր թունավոր են և տեղացի բնակիչները դրանց կոչում են գարշասնկեր (պոգանկա), խուսափում են հավաքելուց, և վերջին տարիներին թունավորման դեպքեր չեն գրանցվել:

«Դիլիջան» ազգային պարկի» տարածքում աճող անոթավոր բույսերից 17-ը ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (9-ը՝ վտանգված (EN), 5-ը՝ խոցելի(VU), իսկ 3-ը՝ անհետացման եզրին գտնվող (NT) կարգավիճակով)՝ Պսեֆելլուս դեբեդի (Psephellus debedicus) (EN), Պոպուլիկ Մարշալի (Corydalis marschalliana) (EN), Պապլոր դժգույն (Muscari pallens) (EN), Արքայածաղիկ բլրակային (Fritillaria collina) (EN), Էպիպոգիում անտերև (Epipogium aphyllum) (EN), Բանպոտ Բրաունի (Polystichum braunii) (EN), Հողմածաղիկ գորտնուկային (Anemone ranunculoides) (EN), Թեզիում փռված (Thesium procumbens) (EN), Օրտիլիա փոքր (Orthilia secunda) (EN), Եզնակող Կոզո-Պոլյանսկու (Bupleurum koso-poljanskyi) (VU), Գնարբուկ սքանչելի (Primula amoena) (VU), Շիկատակ (Atropa bella-donna) (VU), Կենի հատապտղային (Taxus baccata) (VU), Շյուղախոտ անտառային (Festuca drymeja) (VU), Ձնծաղիկ Միրզոևայի (Merendera mirzoevae) (NT), Շուշան հայկական (Lilium armenum) (NT), Սպնդուկ միջին (Pyrola media) (NT):

14 տեսակ էնդեմներ են, որոնցից 7-ը՝ Հայաստանի, 3-ը՝ Կովկասի, 4-ը՝ Անդրկովկասի:

Հայաստանի էնդեմիկներ

Եզնակող Կոզո-Պոլյանսկու (Bupleurum koso-poljanskyi) Պսեֆելլուս դեբեդի (Psephellus debedicus) Պսեֆելլուս փամբակի (Psephellus pambakensis), Ձնծաղիկ Միրզոևայի, (Merendera mirzoevae), Խլածաղիկ Օլգայի (Scrophularia olgae) Կտավախոտ զանգեզուրի (Linaria zangezura) Մասրենի Սոսնովսկու (Rosa sosnovskyana);

Կովկասի էնդեմիկներ

Ճոճոուկ կովկասյան (Cerastium holosteum) Պապլոր դժգույն (Muscari pallens) Արքայածաղիկ բլրակային (Fritillaria collina) chelkownikowii) Արոսենի հայաստանյան (Sorbus ajastana) Բարակոտնուկ Ալբովի-լոռիի (Koeleria alбовii subsp. loriensis) Բարակոտնուկ Ալբովի-Ֆոմինի (Koeleria alбовii subsp. fominii);

Անդրկովկասի էնդեմիկներ

Կտավախոտ Շելկովնիկովի (Linaria schelkownikowii) Արոսենի հայաստանյան (Sorbus ajastana) Բարակոտնուկ Ալբովի-լոռիի (Koeleria alбовii subsp. loriensis) Բարակոտնուկ Ալբովի-Ֆոմինի (Koeleria alбовii subsp. fominii):

Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում կարմիր գրքում գրանցված տեսակաները բացակայում են:

6.8.2 Կենդանական աշխարհ Անողնաշարավորներ

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում հանդիպում են փափկամարմինների (Mollusca) 69 և հողվածոտանիների (Arthropoda) 143 տեսակներ: Վերջիններս պատկանում են միջատների (Insecta) դասին: Նշված տեսակներից 7-ը Հայաստանի էնդեմիկներ են: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում ընդգրկված են 3 տեսակներ, որոնք հանդիպում են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Դրանք են՝ *Parnassius apollo* L., *Cerambyx cerdo acuminatus* Motsch., *Rosalia alpina* L. և *Proserpinus proserpina* Pall-ը: Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում կարմիրգրքում գրանցված տեսականեր չկան:

Սողուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում բացահայտվել են սողունների 19 տեսակներ, որոնք բաժանվում են հետևյալ կարգաբանական խմբերի.

- Մողեսներ (Lacertilia) – 12 տեսակ.
- Օձեր (Serpentes) – 6 տեսակ.
- Կրիաներ (Testudines) - 1:

Նշված սողուններից ոչ մեկը Հայաստանի Կարմիր գրքում գրանցված չէ:

Կաթնասուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների 49 տեսակներ: Դրանք բաժանված են հետևյալ 6 կարգաբանական դասերի.

- Միջատակերներ (Insectivora) – 9 տեսակ.
- Կրծողներ (Rodenti) – 17 տեսակ.
- Նապաստակակերպեր (Logomorpha) —1 տեսակ.
- Ձեռքաթևավորներ (Chiroptera) –7 տեսակ.
- Գիշատիչներ (Carnivora) – 12 տեսակ.
- Կճղակավորներ (Artiodactyla) – 3 տեսակ:

Նշված կաթնասուններից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են 6-ը՝ Եվրոպական լայնական ծալքաշուրթը, հնդկական վայրենակերպը կամ մացառախոզը, խայտաքիսը, ջրսամույրը, գորշ արջը և անտառային կատուն:

6.8.3 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիքունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրականացվում են արդեն իսկ կառուցապատված ասֆալտապատ տարածքներում, որտեղ բուսահողը բացակայում է: Նոր տարածքների օտարում ջրագծերի կառուցման համար չի նախատեսվում, շինարարական աշխատանքներն

իրականացվելու են նախկինում անցկացված խողովակաշարի սպասարկման գոտում՝ ճանապարհի երկարությամբ: Աշխատանքների ընթացքում նախատեսվում է Դիլիջան համայնքի, «Դիլիջան» ազգային պարկի, հողերի ժամանակավոր օգտագործում:

Ջրագծի անցկացման շինարարական բոլոր տեսակ գործողությունների համար անհրաժեշտ է հատկացնել հնարավորինս նեղ միջանցք՝ ջրագծի ուղեգծով՝ բացառելով տեխնիկատրանսպորտային միջոցների կայանումը «Դիլիջան» ազգային պարկի տարածքում կամ խողովակակարի սպասարկման գոտուց դուրս տարածքներում:

Խրամուղիների հետլիցքից հետո տարածքները հարթեցվում են և մաքրվում շինարարական թափոններից: Մնացորդային բնահողը/գրունտը ամբողջովին կօգտագործվի շրջակա տարածքների հարթեցման համար

Տարածքում հայտնաբերված ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի առանձնյակների տեղափոխումն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 781-Ն որոշման պահանջներով:

Գործունեության տարածքում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014թ. N781-Ն որոշմամբ նախատեսված միջոցառումների հետ միասին տնտեսական գործունեություն իրականացնողները՝

- առանձնացնում են օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

- ժամանակավորապես սահմանափակում են առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

- նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

Հողերում հայտնաբերված՝ կարմիր գրքում գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների առանձնյակների տեղափոխումն իրականացվում է տնտեսական գործունեություն իրականացնողների միջոցների հաշվին՝ լիազորված պետական մարմնի հետ կնքված համապատասխան պայմանագրի համաձայն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի

մաքրում աղբից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի տեղափոխման վայրը:

6.8.4 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Կենդանական աշխարհի վրա ազդեցությունը կարող է արտահայտվել հողային աշխատանքների ժամանակ միջատների բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեննոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով խրամուղու փորման աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

Կենդանական աշխարհի վրա ազդեցությունը մեղմացնելու նպատակով անհրաժեշտ է բացառել՝

- գիշերային ժամերին մեքենամեխանիզմների լուսավորությամբ կամ այլ լուսավորության կիրառմամբ աշխատանքները,
- տրանսպորտային շարժն ԱՊ-ի տարածքում՝ հատկապես Պարկի պահպանության օբյեկտ հանդիսացող կարևոր կենդանատեսակների բազմացման շրջանում,
- աղմկահարույց տեխնիկական միջոցների աշխատանքը ԱՊ-ի տարածքում,
- շինարարական աշխատանքները ԱՊ-ի պահպանման գոտու այն տեղամասերում, որոնք հանդիսանում են կարևոր կենդանատեսակների բնադրավայրեր կամ միգրացիոն ուղիներ:

6.9. Տարածաշրջանի վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տավուշի մարզում ստեղծվել են բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ), այդ թվում՝ մեկ ազգային պարկ, 5 արգելավայր և 2 դենդրոպարկ (Իջևանի դենդրոպարկ, Բերդի սորաններ):

Տավուշի մարզում են գտնվում Իջևանի, Արջատիսլենու, Գանձաքարի-Վերին Աղդանի, Զիկատարի, Ախնաբադի կենու պուրակ պետական արգելավայրերը: Սակայն նշված

արգելավայրերը գտնվում են ծրագրի ազդման գոտուց հեռու և իրենց վրա չեն կրելու որևէ բացասական ազդեցություն:

Ծրագրի իրականացման տարածքը մասամբ գտնվում է «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի տարածքում:

«Դիլիջան» ազգային պարկը ստեղծվել է 1958 թվականին: Սկզբնապես եղել է որպես արգելոց, իսկ 2002 թվականին վերափոխվել է ազգային պարկի: Ստեղծման գլխավոր նպատակը բուսական և կենդանական աշխարհի պահպանումը, հարստացումը և տեղական պայմաններում նոր տեսակների ստացումն է: Դիլիջանի արգելոցը զբաղեցնում է Աղստև գետի վերին հոսանքի ավազանը՝ Հալաբի արևելյան, Միափորի հյուսիսարևմտյան և Արեգունի լեռնաշղթայի հյուսիսարևելյան լանջերը: «Դիլիջան» ազգային պարկը բաժանված է 4 տեղամասերի, դրանք են՝

1. «Դիլիջան»

2. «Շամախյան»

3. «Հաղարծին»

4. «Գոշ»:

«Դիլիջան» ազգային պարկը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 21-ի «Դիլիջան» ազգային պարկ կազմակերպելու մասին» N 165 որոշմամբ՝ Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի 1958 թվականի սեպտեմբերի 13-ի «Հայկական ՍՍՌ բնության պահպանության մասին» օրենքի կիրառման մասին» N 341 որոշմամբ կազմակերպված «Դիլիջան» պետական արգելոցի և դրան հարակից տարածքների սահմաններում: Պարկի ստեղծման նպատակներն են՝

ա) Աղստև և Գետիկ գետերի ավազանների ջրային ու ցամաքային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի ապահովումը, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ու պատմամշակութային հուշարձանների պահպանությունը.

բ) հյուսիսային Հայաստանին բնորոշ հազվագյուտ և անհետացող վայրիբույսերի ու կենդանիների տեսակների, գենոֆոնդի և դրանց ապրելու միջավայրի պահպանությունը.

գ) բնական լանդշաֆտների, դրանց առանձին տարրերի, բնական գործընթացների և երևույթների գիտական ուսումնասիրությունը՝ ուղղված պարկի տարածքի բնական էկոհամակարգերում ընթացող գործընթացների կանխատեսմանն ու գնահատմանը, բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի պահպանմանը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ու բնության պահպանության գիտական հիմունքների մշակմանը, պարկին հարակից տարածքների համար բնության պահպանության և օգտագործման արդյունավետ ձևերի մշակման բազայի ապահովմանը:

6.10 Բնության հուշարձաններ

ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14 N967-Ն որոշմամբ Տավուշի մարզի տարածքում հաստատվել են բնության հետևյալ հուշարձանները.

1.	Կռվասարի փոխակերպարային թերթաքարեր	Տավուշի մարզ, Բերդ քաղաքից մոտ 20 կմ հարավ՝ Վարագաջուր (Հախում) գետի վերին հոսանքի ավազանում, Վարագաջուրի ձախ վտակ Կառնուտի և Վարագաջուր գետի աջ չոր վտակի հատման կետում, Կառնուտ վտակի հոսանքն է վեր գնացող գրունտային ավտոճանապարհի աջ կողմում
2.	«Կալաքար» լեռ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից մոտ 6 կմ հարավ-արևմուտք, Վարագաջուր (Հախում) գետի ձախափնյա անտառապատ լանջին՝ գրունտային ճանապարհի աջ կողմում, 12-13 դարերի Շահմուրադ (Չխմուրադի, կամ Գետակիցք վանքի) վանքային համալիրից մոտ 150 մ դեպի հյուսիս-արևմուտք
3.	«Չինչինի անկյունային աններդաշնակություն»	Տավուշի մարզ, Չինչին գյուղի հվ-արլ եզրին
4.	«Չինչինի սանդղավուլ քարափներ»	Տավուշի մարզ, Չինչին գյուղից ուղիղ գծով 1.5 կմ հարավ-արևելք, Հախում գետի աջակողմյան լանջին
5.	«Պլագիոգրանիտ-պորֆիրային դայք»	Տավուշի մարզ, Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, Տավուշ գետի ձախ ափին, գետից 5 մ բարձրության վրա
6.	«Քվարցային	Տավուշի մարզ, Հովք գյուղից 900 մ դեպի հս-ալ, Աղստև գետի ձախ ափին,
7.	պլագիոպորֆիրների սյունաձև անջատումներ»	Երևան- Իջևան ավտոմայրուղու ձախ կողմում
8.	«Փայտասար» քարանձավների համալիր	Տավուշի մարզ, Կողբ գյուղից 4 կմ հարավ
9.	«Օձաքար» լեռ	Տավուշի մարզ, Պառավաքար գյուղից 3 կմ (ուղիղ գծով 1 կմ) հյուսիս-արևմուտք, Պառավաքար-Վազաշեն գրունտային ավտոճանապարհի աջ կողմում՝ Պառավաքար լեռնագագաթից 1,5 կմ հարավ-արևմուտք, Կաղնուտաթումբ լեռնագագաթից մոտ 3 կմ հյուսիս-արևելք

Կենսաբանական հուշարձաններ

1.	«Զորականի սոսի»	Տավուշի մարզ, Զորական գյուղական համայնքի վարչական սահմանում
2.	«Վարդան Սամիկոնյանի կաղնի»	Տավուշի մարզ, Ակնաղբյուր գյուղական համայնք
3.	«Սարի գյուղի սոսի»	Տավուշի մարզ, Սարիգյուղ գյուղական համայնք, Երևան-Նոյեմբերյան ճանապարհից աջ
4.	«Գետահովտի մամռապատ ժայռ»	Տավուշի մարզ, Գետահովիտ Գետահովիտ գյուղից մոտ 1.8 կմ հյուսիս-արևմուտք՝ Սառնաջուր գետի ձախ ափին
5.	«Զիկատարի տանձուտ»	Տավուշի մարզ, «Զիկատար» ուսումնական կենտրոնից հարավ-արևմուտք, 600 մ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Զիկատարի անտառպետություն
6.	«Ոսկեպարի կենի»	Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Զուջևանի անտառպետություն, Ոսկեպար համայնքից 6 կմ հարավ-արևմուտք
7.	«Զոնջուկուտ»	Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Դովեղի անտառպետություն, Բարեկամական համայնքից 1 կմ հարավ-արևմուտք

Պատմամշակութային հուշարձաններ

Բնական ժառանգության, որպես տուրիզմի և ռեկրեացիայի ռեսուրս, անկրկնելի օբյեկտներ են հանդիսանում Աղավնավանքի կենու պուրակը, Հաղարծնի հաճարկուտները, Խաչարձանի կաղնուտները, Պարզ և Գոշ լճերը:

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում, ըստ ՀՀ կառավարության 2004 թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1929-Ն որոշմամբ հաստատված պատմամշակութային հուշարձանների պետական ցուցակի, հաշվառված է 473 հուշարձան: 'Դիլիջան' ազգային պարկի կառավարման պլանի մշակման ընթացքում ցուցաբերվել է ընդհանրացված մոտեցում, որի դեպքում առանձին հուշարձաններ միավորվել են խմբերի մեջ: Այսպես, օրինակ՝ Դիլիջան քաղաքի վարչական տարածքում, ըստ վերը նշված ցուցակի, առկա է 72 ազգագրական բնակելի տուն, իսկ կառավարման պլանում դրանք խմբավորված են մեկ թաղամասում: Նույն մոտեցման արդյունքում 473 հաշվառված հուշարձանների փոխարեն ստացվել է 257, որը հուշարձանների պահպանության և շահագործման տեսակետից առավել կառավարելի է: Համաձայն այս մոտեցման 'Դիլիջան' ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում առկա պատմության և մշակույթի հուշարձանները, այդ թվում՝ բնական հուշարձանները, դասակարգվում են^a 2 բնական հուշարձան, 3 քարեդարյան հնավայր, 9 քարայր կացարան, 8 քաղաքատեղի, 51 գյուղատեղի, ազգագրական տների թաղամաս, 13 ամրոց, 4 կամուրջ, 1 մետաղագործական համալիր, 4 եկեղեցի, 4 վանական համալիր, 17 մատուռ, 23 խաչքարերի խումբ, 26 առանձին խաչքար, 4 աղբյուր հուշարձան, 2 երկրորդ համաշխարհայինի հերոսների հիշատակի հուշարձան, 2 դամբարանադաշտ, 48 գերազմանոց: Հուշարձանների ժամանակային բազմազանությունն ընդգրկում է մ.թ.ա. 60-50 հազարամյակից մինչև մ.թ. 20-րդ դարը ընկած ժամանակահատվածը, այսինքն՝ քարե դարի վաղ ժամանակներից մինչև մեր դարաշրջանը: Դրանք հավասարապես սփռված են ազգային պարկի ողջ տարածքով, իսկ ամենախիտ խմբավորումը գտնվում է Աղստե գետի ափերին և դրա վտակների միջին հոսանքում: Անշարժ հուշարձանների 99 %-ը գտնվում է ազգային պարկի բուն տարածքում և միայն 1 %-ը՝ դրա պահպանական գոտում: Ներկայացված հնագիտական և պատմամշակութային հուշարձանների զգալի մասը կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի զարգացման պատմական ընթացքում, հատկապես 12-13-րդ դարերում: Դրանց առկայությունը հնարավորություն է տալիս այստեղ կազմակերպել պատմամշակութային, ուսումնական ու գիտաճանաչողական (հնագիտական, երկրաբանական), էկոլոգիական, էթնոգրաֆիկ և տուրիզմի այլ ձևեր: Բնության հուշարձանների ցանկը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 14 Օգոստոսի 2008, 967 – Ն որոշմամբ: Համաձայն այդ ցանկի ջրագծերի կառուցման և հարակից տարածքներում բնության հուշարձաններ չկան: Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի N 473-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել բնության հուշարձանների ցանկում:

Ջրագրական հուշարձանների շարքն են համարել «Դսեղի Ծովեր» լիճն ու «Շամլուղի լճակը»-ը, բնապահպանական հուշարձանների ցանկը համարվել է «Օձի պորտ» հուշարձանով, իսկ կենսաբանական հուշարձանների թվին ավելացել են «Ոսկեպարի կենի» և «Ջոնջուկուտ» կոչվող տարածքները: Համարված ցանկում ևս ջրագծերի կառուցման և հարակից տարածքներում բնության հուշարձաններ չկան:

Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 303 հուշարձան (146 միավոր): Այս ցանկում ևս ջրագծերի կառուցման և հարակից տարածքներում պատմության և մշակույթի հուշարձաններ չկան:

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համար ա նիշ	նշան	հավելյալ նշումներ
Ամրոց «Բերդի դաշ»	Ք.ա. 2-1 հզ. միջնադար	Հաղարծնի վանքից 2 կմ ամ, երկու ձորերի միջև, բլրի վրա, «Բոխուտ թումբ» վայրում	10.3/1	<	ավերված, պահպանվել են պարիսպների հիմքերը
Բնակատեղի	Ք.ա. 2-1 հզ	ամրոցիվ հվ և ատ	10.3/1.1	<	
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	բնակատեղիի մոտ	10.3/1.2	<	ավերված
Բնակատեղի	Ք.ա. 2-1 հզ.	Գոլովինո թաղամասից հս, ԴՕՍԱԱՖ-ի շենքից 1.5 կմ հեռու, բլրի հվ-ատ հարթակում	10.3/2	<	ավերված
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	բնակատեղիի տարածքում և մերձակայքում	10.3/2.1	<	ավերված
Բնակելի տուն	1911 թ.	Աղայան փող. 2	10.3/3	<	երկհարկ, կառուցել է Մ. Սաղաթեյանը
Բնակելի տուն	1882 թ.	Աղայան փող. 3	10.3/4	<	երկհարկ, կառուցել է հյուան Ա. Պետրոսյանը
Բնակելի տուն	19 դ. վերջ	Կալինինի փող. 5	10.3/5	<	եղել է իշխանուհի Մարիամ Թումանյանի ամառանոցը, 1979- ից՝ ժողովրդական արվեստի թանգարանի Դիլիջանի մասնաճյուղի շենք
Բնակելի տուն	1945 թ.	Կալինինի փող. 6	10.3/6	<	

Բնակելի տուն	1940 թ.	Կալինինի փող. 7	10.3/7	<	
--------------	---------	-----------------	------------------------	---	--

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
Բնակելի տուն	1934 թ.	Կալինինի փող. 8	10.3/8	<	
Բնակելի տուն	1925-1930 թթ.	Կալինինի փող. 10	10.3/9	<	երկհարկ
Բնակելի տուն	19 դ. վերջ	Կալինինի փող. 11	10.3/10	S	
Բնակելի տուն	1908 թ.	Կալինինի փող. 12	10.3/11	<	երկհարկ
Բնակելի տուն	1897 թ.	Կալինինի փող. 15	10.3/12	S	
Բնակելի տուն	1927 թ.	Կալինինի փող. 18	10.3/13	<	երկհարկ
Բնակելի տուն	1920 թ.	Կալինինի փող. 19	10.3/14	S	
Բնակելի տուն	1957 թ.	Կալինինի փող. 20	10.3/15	<	
Բնակելի տուն	1918 թ., 1960 թ.	Կալինինի փող. 22	10.3/16	<	երկհարկ
Բնակելի տուն	1919 թ.	Կալինինի փող. 25	10.3/17	S	
Բնակելի տուն	1796 թ.	Կալինինի փող. 26	10.3/18	S	
Բնակելի տուն	19 դ. սկիզբ	Կալինինի փող. 28	10.3/19	<	երկհարկ
Բնակելի տուն	1832 թ.	Կալինինի փող. 34	10.3/20	<	երկհարկ
Բնակելի տուն	19 դ. 1-ին կես	Կալինինի փող. 37	10.3/21	S	
Բնակելի տուն	19 դ. 1-ին կես	Կալինինի փող. 41	10.3/22	S	
Բնակելի տուն	1842 թ.	Կալինինի փող. 42	10.3/23	S	
Բնակելի տուն	1830 թ.	Կալինինի փող. 43	10.3/24	S	
Բնակելի տուն	1893 թ.	Կալինինի փող. 45	10.3/25	S	
Բնակելի տուն	1850-ական թթ.	Կալինինի փող. 48	10.3/26	S	
Բնակելի տուն	19 դ. 2-րդ կես	Կալինինի փող. 52 ա	10.3/27	S	
Բնակելի տուն	1830-ական թթ.	Կալինինի փող. 53	10.3/28	S	
Բնակելի տուն	1880-ական թթ.	Կալինինի փող. 56	10.3/29	S	
Բնակելի տուն	1880 թ.	Կալինինի փող. 60	10.3/30	S	
Բնակելի տուն	18 դ. վերջ	Կալինինի փող. 66	10.3/31	S	
Բնակելի տուն	1905 թ.	Կալինինի փող. 72	10.3/32	S	
Բնակելի տուն	1860 թ.	Կալինինի փող. 78	10.3/33	S	
Բնակելի տուն	1930-ական թթ.	Կալինինի փող. 88	10.3/34	S	
Բնակելի տուն	1870 թ	Կալինինի փող. 98	10.3/35	<	երկհարկ
Բնակելի տուն	1872 թ.	Կալինինի փող. 110	10.3/36	<	երկհարկ
Բնակելի տուն	1901 թ.	Կալինինի փող. 126	10.3/37	<	երկհարկ
Բնակելի տուն	1937 թ.	Կալինինի փող. 135	10.3/38	<	

Բնակելի տուն	19 դ. 50-ական թթ.	Կալինինի փող. 162	10.3/39	S	
Բնակելի տուն	20 դ. սկիզբ	Կալինինի փող. 168	10.3/40	S	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
Բնակելի տուն	1880-ական թթ.	Կալինինի փող. 170	10.3/41	S	
Բնակելի տուն	1890 թ.	Կալինինի փող. 184	10.3/42	S	
Բնակելի տուն	19 դ. 1-ին կես	Կալինինի փող. 188	10.3/43	S	
Բնակելի տուն	1910 թ.	Հակոբջանյան փող. 15	10.3/44	<	երկհարկ, կառուցել է Ն. Պողոսյանը
Բնակելի տուն	1910 թ.	Հակոբջանյան փող. 19	10.3/45	S	
Բնակելի տուն	1917 թ.	Հակոբջանյան փող. 21 ա	10.3/46	<	Ֆրանգույանների տունը
Բնակելի տուն	1908 թ., 1959 թ.	Հակոբջանյան փող. 23	10.3/47	<	երկհարկ, կառուցել է Ա. Սիմոնյանը
Բնակելի տուն	1920 թ.	Հակոբջանյան փող. 28	10.3/48	S	
Բնակելի տուն	1926 թ.	Հակոբջանյան փող. 31	10.3/49	<	միահարկ, կառուցել է հյուսն Ե. Սիմոնյանը
Բնակելի տուն	1882 թ.	Հակոբջանյան փող. 32	10.3/50	<	երկհարկ, կառուցել է Բ. Ֆրանգույանը
Բնակելի տուն	1890-ական թթ.	Հակոբջանյան փող. 34	10.3/51	S	
Բնակելի տուն	1916 թ.	Հակոբջանյան փող. 36	10.3/52	S	երկհարկ, կառուցել է Բ. Ֆրանգույանը
Բնակելի տուն	1912 թ.	Հակոբջանյան փող. 52	10.3/53	<	
Բնակելի տուն	1882 թ.	Մանթաշյան փող. 3 գ	10.3/54	<	երկհարկ, կառուցել է Դիլիջանի տանուտեր Մովսես Հովհաննիսյանը
Բնակելի տուն	1860 թ.	Մանթաշյան փող. 4	10.3/55	S	
Բնակելի տուն	1894 թ.	Մանթաշյան փող. 6	10.3/56	<	երկհարկ, կառուցել է սայլագործ Հ.

					Հակոբյանը
Բնակելի տուն	1890 թ.	Մյասնիկյան փող. 32	10.3/57	<	Երկհարկ, կառուցել է Տ. Բադալյանը
Բնակելի տուն	1890 թ.	Մյասնիկյան փող. 34	10.3/58	<	Երկհարկ, կառուցել է Դ. Ուլիխանյանը

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
Բնակելի տուն	1870-ական թթ.	Մյասնիկյան փող. 38	10.3/59	<	Երկհարկ, վաճառական Ասլանովների տունը
Բնակելի տուն	1895-1897 թթ.	Մյասնիկյան փող. 50	10.3/60	<	Եղել է ցարական դատարանի շենքը
Բնակելի տուն («Դալլաքի տուն»)	19 դ. վերջ	Մյասնիկյան փող. 54	10.3/61	<	Երկհարկ, կառուցել է սափրիչ Սիմոնը, առաջին հարկում եղել է վարսավիրանոց
Բնակելի տուն	19 դ. վերջ	Մյասնիկյան փող. 56	10.3/62	<	Երկհարկ
Բնակելի տուն («Լեզգու կամ փոնչոց տուն»)	19 դ. կես	Մյասնիկյան փող. 58	10.3/63	<	Երկհարկ
Բնակելի տուն	1850-1860-ական թթ.	Մյասնիկյան փող. 82	10.3/64	<	Երկհարկ
Բնակելի տուն	1894 թ.	Մյասնիկյան փող. 86	10.3/65	<	Երկհարկ
Բնակելի տուն	1910 թ.	Մյասնիկյան փող. 88	10.3/66	S	
Բնակելի տուն	1930 թ.	Մյասնիկյան փող. 102	10.3/67	<	Երկհարկ, կառուցել են Պողոսյանները
Բնակելի տուն	1925 թ.	Մյասնիկյան փող. 102ա	10.3/68	<	Երկհարկ, կառուցել են Պողոսյանները
Բնակելի տուն	1930 թ.	Մյասնիկյան փող. 102բ	10.3/69	<	Երկհարկ, կառուցել են Պողոսյանները

Բնակելի տուն	1925 թ.	Մյասնիկյան փող. 104	10.3/70	<	երկհարկ, նկուղային մասը կառուցվել է 1873 թ.
Բնակելի տուն	20 դ. սկիզբ	Մյասնիկյան փող. 110	10.3/71	S	
Բնակելի տուն	1933 թ.	Մյասնիկյան փող. 112	10.3/72	S	
Բնակելի տուն	1948 թ.	Մյասնիկյան փող. 118	10.3/73	<	
Բնակելի տուն	1880 թ., 1900 թ.	Օրջոնոկիձեի փող. 1	10.3/74	<	երկհարկ, կառուցվել են Ալիխանյանները
Գերեզմանոց	19-20 դդ.	Մանթաշյան փող.	10.3/75	S	
Գյուղատեղի	7-13 դդ.	քաղաքից 7 կմ աե, Աղստևի աջ ափին, Պարզ լիճ տանող ճանապարհի ծախ	10.3/76	<	ավերված է, տարածքի մի մասի վրա

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
		կողմում, «Բոյնի դար» վայրում			կառուցվել է կինոգործիչների հանգստյան տունը
Գերեզմանոց	7-13 դդ.	գյուղատեղիի աե եզրին	10.3/76.1	<	ավերված է, խաչքարերից մի քանիսը տեղափոխել են նույն հանգստյան տան տարածք
Եկեղեցի	12-13 դդ.	գյուղատեղիի կենտրոնական մասում	10.3/76.2	S	պահպանվել են հիմքերը
Գյուղատեղի	7-15 դդ.	քաղաքից 3 կմ հվ-աե, Աղստևի աջ ափին, անտառում, «Բախտիար» գյուղատեղիից մոտ 2 կմ ամ, «Ղալուխ» վայրում	10.3/77	<	ավերված
Գերեզմանոց	7-10 դդ.	գյուղատեղիի հվ-ամ եզրին	10.3/77.1	<	
Գերեզմանոց	7-13 դդ.	գյուղատեղիի աե մասում	10.3/77.2	<	
Խաչքար թևավոր	12-13 դդ.		10.3/77.2.1	<	տեղահանված է, հենած ծառին
Գյուղատեղի	7-20 դդ.	քաղաքի ամ մասում, Երևան-Դիլիջան մայրուղուց աջ,	10.3/78	<	ավերված

		«Խրտանոց» վայրում			
Խաչքար թևավոր	13 դ.		10.3/78.1	<	արձանագիր է, կոտրված է վերին խաչաթևը
Գյուղատեղի	10-14 դդ.	քաղաքից 5 կմ հս-ան, Դիլիջան-Իջևան մայրուղուց ձախ, «Փիշիկ» և «Գոմաձոր» տանող ճանապարհի վրա	10.3/79	S	տարածքն ընկած է կառուցապատման տակ
Գյուղատեղի	10-15 դդ.	քաղաքից 4 կմ հս-ան, «Փիշիկ» գյուղատեղիից 1 կմ հվ-ամ, «Գոմաձոր» տանող ճանապարհին	10.3/80	<	ավերված
Գերեզմանոց	10-15 դդ.		10.3/80.1	<	ավերված
Խաչքար	11 դ.		10.3/80.1.1	<	ընկած
Խաչքար	12 դ.		10.3/80.1.2	<	վերնամասը բացակայում է
Խաչքար	13 դ.		10.3/80.1.3	<	
Խաչքար	13 դ.		10.3/80.1.	<	արձանագիր,

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
			4		ստորին մասը կոտրված
Խաչքար	13-14 դդ.		10.3/80.1.5	<	
Խաչքար	13-14 դդ.		10.3/80.1.6	<	
Խաչքար	14-15 դդ.		10.3/80.1.7	<	
Խաչքար	14-15 դդ.		10.3/80.1.8	<	
Գյուղատեղի	10-15 դդ.	քաղաքից 6 կմ հս-ան, «Փիշիկ» գյուղատեղիից 1 կմ հս-ամ, «Գոմաձոր» տանող ճանապարհի երկու կողմում	10.3/81	<	ավերված

Գյուղատեղի	10-18 դդ.	Պարզ լճից 300 մ հս, «Ղազար բեկ» վայրում	10.3/82	<	
Գերեզմանոց	12-14 դդ.	բլրալանջին	10.3/82.1	<	ավերված
Խաչքար	12-13 դդ.		10.3/82.1. 1	<	տեղափոխել են լճափնյա ռեստորանի մոտ. ստորին մասը բացակայում է
Խաչքար	12-13 դդ.		10.3/82.1. 2	<	վերնամասը բացակայում է
Խաչքար	12-13 դդ.		10.3/82.1. 3	<	վերնամասը բացակայում է
Խաչքար	13 դ.		10.3/82.1. 4	<	
Խաչքար	13 դ.		10.3/82.1. 5	<	
Խաչքար	13 դ.		10.3/82.1. 6	<	երկատված
Խաչքար	13 դ.		10.3/82.1. 7	<	երկատված
Խաչքար	13 դ.		10.3/82.1. 8	<	
Խաչքար	13-14 դդ.		10.3/82.1. 9	<	
Խաչքար	13-14 դդ.		10.3/82.1. 10	<	վերնամասը բացակայում է
Խաչքար	13-14 դդ.		10.3/82.1. 11	<	ստորին կեսը կոտրված է
Եկեղեցի	13 դ.	գերեզմանոցի ամ մասում	10.3/82.2	<	պահպանվել են

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
					պատերը՝ 1.50 մ բարձրությամբ
Գյուղատեղի	12-14 դդ.	քաղաքից 3 կմ հվ-աե, «Իմպուլս» գործարանի հանգստյան տնից 1 կմ հվ, անտառի բացատում, Աղստևի աջ ափին, բլրակի վրա, «Բախտիար» վայրում	10.3/83	<	

Գերեզմանոց	12-14 դդ.		10.3/83.1	<	1986 թ. տեղի խաչքարերից երկուսը տեղափոխել ու ագուցել են հանգստյան տան ամ պատին
Խաչքար	13 դ.		10.3/83.1.1	<	
Խաչքար	13-14 դդ.		10.3/83.1.2	<	
Եկեղեցի	12-13 դդ.		10.3/83.2	S	ավերված
Ճանապարհ	12-15 դդ.	ծգվում է «Բախտիար» և «Ղալուխ» գյուղատեղիների միջև՝ 2 կմ երկարությամբ	10.3/83.3	<	ավերվել են եզրապատերը
Գյուղատեղի	12-14 դդ.	քաղաքից 8 կմ հվ-աե, անտառի բացատում, աե- ից ձորակով եզերված «Սմրդանի յալ» տեղանքում	10.3/84	<	ավերված
Գերեզմանոց	12-14 դդ.		10.3/84.1	<	ավերված
Խաչքար Հոգեդեղի	1254 թ.		10.3/84.1.1	<	ստորին մասը կոտրված
Խաչքար	13 դ.		10.3/84.1.2	<	ստորին մասը կոտրված
Խաչքար	13-14 դդ.		10.3/84.1.3	<	ստորին մասը կոտրված
Գյուղատեղի	12-17 դդ.	քաղաքից 5 կմ ամ, «Ռուսկի բալկա» ձորակում, «Յերկով թալայից» 1 կմ հս	10.3/85	<	ավերված
Գերեզմանոց	12-17 դդ.	գյուղատեղիի հս մասում	10.3/85.1	<	
Խաչքար	13 դ.		10.3/85.1.1	<	
Մատուռ	12-13 դդ.	գյուղատեղիի հս մասում	10.3/85.2	<	թաղը և ամ պատի

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան .	հավելյալ նշումներ
-----------	-----------	-------------	------------	--------	-------------------

					որոշ հատվածներ փլված են
Գյուղատեղի	12-17 դդ.	քաղաքից 0.5 կմ ամ, Գոլովինո թաղամասում, «Յերկով թալա» վայրում, երգահանների հանգստյան տուն տանող ճանապարհին	10.3/86	<	ավերված
Գերեզմանոց	12-17 դդ.		10.3/86.1	<	միակ խաչքարը (13 դ.) Գոշ է տեղափոխել Ա. Հովսեփյանը, 1980- ական թթ.
Եկեղեցի	12-13 դդ.		10.3/86.2	<	ավերված
Գյուղատեղի	13-15 դդ.	քաղաքից 6 կմ ան, Կինոգործիչների հանգստյան տուն և Պարզ լիճ տանող ճանապարհին, «Մոլոկանի տանձուտ» («Տանձուտի թալա») բացատում	10.3/87	<	
Գերեզմանոց	13-15 դդ.	գյուղատեղիի հվ մասում	10.3/87.1	<	ավերված
Խաչքար	13 դ.		10.3/87.1. 1	S	գյուղատեղիի միակ քանդակագործ բեկորն է (վերնամաս)
Գյուղատեղի	13-17 դդ.	քաղաքից 8 կմ ան, Կինոգործիչների հանգստյան տնից 1 կմ ան, Պարզ լիճ տանող ճանապարհին, «Մորմոցի յալ» վայրում	10.3/88	S	ավերված
Գերեզմանոց	13-17 դդ.		10.3/88.1	S	պահպանվել են հատ ու կենտ տապանաքարեր
Գյուղատեղի	14-18 դդ.	քաղաքից 1 կմ հվ, «Իզակի թալա» («Խաչի փոս») վայրում	10.3/89	S	ավերված
Գերեզմանոց	14-18 դդ.	գյուղատեղիի ամ մասում	10.3/89.1	S	ավերված
Եկեղեցի	17-18 դդ.	գերեզմանոցում	10.3/89.2	S	ավերված

Գյուղատեղի	15-19 դդ.	քաղաքից 3.5 կմ աե, «Շլորկուտի» անտառում, «Ղափարա»	10.3/90	S	ավերված
------------	-----------	---	-------------------------	---	---------

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
		հանդամասում			
Գերեզմանոց	15-19 դդ.		10.3/90.1	S	
Գյուղատեղի	17-18 դդ.	քաղաքային շուկայից 500 մ հվ-աե, «Ալոյի թալայում»՝ եղևնիների բացատում	10.3/91	S	ավերված
Գյուղատեղի	17-18 դդ.	քաղաքից 6 կմ հս-ամ, Աղստև գետի ձախ ափին, Դիլիջան- Վանաձոր խճուղուց 1 կմ ձախ, «Գերեզմանուտի յալ» բացատում	10.3/92	S	ավերված
Գերեզմանոց	17-18 դդ.	գյուղատեղիի հս եզրին	10.3/92.1	S	
Գյուղատեղի	17-18 դդ.	քաղաքից 8 կմ հվ-աե, «Ժանգոտ գյուլ» լճակի մոտ, «Օրդաբլվի» բացատում	10.3/93	S	ավերված
Գյուղատեղի	17-18 դդ.	քաղաքից 10 կմ հս-ամ, «Շլորկուտի ձոր» վայրում, Դիլիջան- Վանաձոր ճանապարհից 5-6 կմ աջ, անտառի մեջ, «Նովոկ» աղբյուրի մոտ	10.3/94	S	
Գերեզմանոց	ուշ միջնադար		10.3/94.1	S	
Գյուղատեղի «Աչաջրի թալա»	10-13 դդ.	քաղաքից 4 կմ հվ-աե	10.3/95	<	
Գյուղատեղի «Արաղանց տեղեր»	7-13 դդ.	քաղաքի աե եզրին, Աղստևի աջ ափի և Մյասնիկյան փողոցի միջև ընկած տարածքում, Պարզ լիճ տանող ճանապարհի վրա	10.3/96	<	ավերվել է 1950- ական թթ. քաղաքի ընդարձակման հետևանքով

Գերեզմանոց	7-13 դդ.		10.3/96.1	<	ավերված է, գյուղատեղիի կառուցապատման ժամանակ խաչքարերը տեղափոխել են Մյասնիկյան փող. N 143 տան բակ
Խաչքար	12 դ.	Մյասնիկյան փող. N 143 տան բակում	10.3/96.1.1	S	
Խաչքար	12 դ.	նույն տեղում	10.3/96.1.2	S	
Խաչքար	13 դ.	նույն տեղում	10.3/96.1.3	<	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
Խաչքար «Մեսրոպ Մաշտոց»	7 դ.	նույն տեղում	10.3/96.1.4	<	ամրացված է պատվանդանին
Գյուղատեղի «Գեղատեղ»	13-17 դդ.	քաղաքից 7 կմ ամ, Ղազախ-Երևան գազատարի անտառամիջյան ճանապարհի երկու կողմում	10.3/97	<	ավերված
Գերեզմանոց	13-17 դդ.		10.3/97.1	<	կիսավեր
Եկեղեցի	13-14 դդ.		10.3/97.2	S	պահպանվել են հիմքերը
Գյուղատեղի «Գեղատեղ»	13-17 դդ.	քաղաքից 10 կմ հվ-աե, Աղստևի աջ ափին, Պարզ լիճ տանող ճանապարհից 2 կմ ձախ, կինոգործիչների հանգստյան տնից 3 կմ հվ- աե, «Ղազախ բեկ» վայրում	10.3/98	S	ավերված
Գերեզմանոց	13-17 դդ.	գյուղատեղիի հս եզրին, սարալանջին	10.3/98.1	S	ավերված
Եկեղեցի	13-14 դդ.	գերեզմանոցի մոտ	10.3/98.2	S	պահպանվել են հիմքերը, ներսը լցված է շարվածքի քարերով

Գյուղատեղի «Գոմաձոր»	5-17 դդ.	քաղաքի Թեղուտ թաղամասից 5 կմ հս-աե, Աղստևի աջ ափին, «Փիշիկ» գյուղատեղիից 2-3 կմ հս-ամ, անտառում	10.3/99	<	ավերված
Գերեզմանոց	5-17 դդ.	գյուղատեղիի հս մասում	10.3/99.1	<	
Խաչքար	7 դ.		10.3/99.1. 1	S	
Խաչքար	9-10 դդ.		10.3/99.1. 2	S	
Խաչքար	9-10 դդ.		10.3/99.1. 3	S	խրված է գետնի մեջ
Խաչքար	9-10 դդ.		10.3/99.1. 4	S	
Խաչքար	9-10 դդ.		10.3/99.1. 5	S	ընկած
Խաչքար	11-12 դդ.	եկեղեցու ամ կողմում	10.3/99.1. 6	<	ընկած
Խաչքար	11-12 դդ.	եկեղեցու աե կողմում	10.3/99.1. 7	<	
Խաչքար	12 դ.		10.3/99.1.	<	ընկած

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան .	հավելյալ նշումներ
			8		
Խաչքար	12 դ.		10.3/99.1. 9	<	ընկած
Խաչքար	12 դ.		10.3/99.1. 10	<	
Խաչքար	12 դ.		10.3/99.1. 11	<	
Խաչքար	12 դ.		10.3/99.1. 12	<	
Խաչքար	13 դ.		10.3/99.1. 13	<	երկատված
Խաչքար	13 դ.		10.3/99.1. 14	<	երկատված
Խաչքար	13 դ.	եկեղեցու ամ կողմում	10.3/99.1. 15	<	ընկած
Խաչքար	13 դ.	եկեղեցու ամ կողմում	10.3/99.1. 16	<	ստորին մասը բացակայում

Խաչքար	13 դ.	Եկեղեցու հս կողմում	10.3/99.1.17	<	երկատված
Խաչքար	13 դ.	մատուռի ամ կողմում	10.3/99.1.18	<	ընկած
Խաչքար	13 դ.	մատուռի հս-ամ կողմում	10.3/99.1.19	<	ընկած
Խաչքար	13 դ.	Նախորդի մոտ	10.3/99.1.20	<	ընկած
Խաչքար	13 դ.	Նախորդի մոտ	10.3/99.1.21	<	երկատված, ընկած
Խաչքար	13 դ.		10.3/99.1.22	<	ընկած
Խաչքար Սարգսի և այլոց	13 դ.		10.3/99.1.23	<	երկատված, ընկած
Խաչքար	13-14 դդ.		10.3/99.1.24	<	ընկած
Խաչքար	13-14 դդ.		10.3/99.1.25	<	հենած է քարերին
Խաչքար	14-15 դդ.		10.3/99.1.26	S	հենած է քարերին
Խաչքար	16-17 դդ.		10.3/99.1.27	<	
Եկեղեցի	5-6 դդ.		10.3/99.2	<	պահպանվել են հիմնապատերը
Մատուռ	5-6 դդ.		10.3/99.3	<	պահպանվել են հիմնապատերը
Գյուղատեղի	14-17 դդ.	Թեղուտ թաղամասից 1.5	10.3/100	S	ավերված

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
«Խաչքողագ»		կմ հվ-աե, Աղստևի աջ ափին, անտառում			
Գերեզմանոց	14-17 դդ.		10.3/100.1	S	
Գյուղատեղի «Խաչի հողեր»	12-15 դդ.	Շամախյան թաղամասի «Խաչի հողեր» վայրում	10.3/101	<	ավերված
Գերեզմանոց	12-15 դդ.		10.3/101.1	<	
Խաչքար թևավոր	8-9 դդ.	ընկած է մատուռի հս-ամ անկյան մոտ	10.3/101.1.1	<	աջ հորիզոնական խաչաթևը կոտրված
Ձիթհան	13-15 դդ.	մատուռից 100 մ հվ-ամ	10.3/101.2	<	ավերված, ուրվագծվում են հիմքերը
Մատուռ	վերակառ.19 դ.		10.3/101.3	S	

Խաչքար	15-16 դդ.	ագուցված է մատուռի հվ պատին, մուտքից վերև	10.3/101.3 .1	<	ագուցվել է վերակառուցման ժամանակ, հորիզոնական դիրքով
«Գյուղատեղի Խաչուտ թալա»	12-13 դդ.	քաղաքից 10-11 կմ ամ, Բլղան գետի վերին հոսանքի շրջանում	10.3/102	<	
Խաչքար	12-13 դդ.		10.3/102.1	<	արձանագիր, ջարդված
Խաչքար թևավոր	12-13 դդ.		10.3/102.2	<	
Գյուղատեղի «Կակոսի»	ուշ միջնադար	քաղաքից 5-6 կմ ամ, Վանաձոր տանող խճուղուց 500 մ ձախ, Աղստևի աջ ափին, երկու ձորակների միջակայքում	10.3/103	S	ավերված
Գերեզմանոց	13-17 դդ.	գյուղատեղիի աե եզրին	10.3/103.1	S	
Խաչքար	13 դ.		10.3/103.1 .1	<	երկատված, ընկած
Մատուռ	17-18 դդ.		10.3/103.2	S	հիմնավեր
Գյուղատեղի «Մեծ թալա» («Ուռուտի թալա»)	17-18 դդ.	քաղաքից 3 կմ հվ, Նույնանուն բացատում	10.3/104	S	ավերված
Գերեզմանոց	8-13 դդ.		10.3/104.1	S	ավերված
Գյուղատեղի «Պակատեղեր»	13-17 դդ.	քաղաքից 4 կմ ամ, անտառի բացատում	10.3/105	S	ավերված
Գյուղատեղի «Փիշիկ»	12-14 դդ.	քաղաքից 5 կմ հս-աե, Աղստև գետի ձախ ափին, Տուբերկույոզային դիսպանսերի տարածքում,	10.3/106	<	ավերվել է դիսպանսերի կառուցման ժամանակ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
		անտառի մեջ			
Գերեզմանոց	12-14 դդ.		10.3/106.1	<	ավերված
Խաչքար	13-14 դդ.	մատուռից 10 մ ամ	10.3/106.1 .1	<	
Խաչքար	13-14 դդ.	Նախորդի մոտ	10.3/106.1 .2	<	երկատված
Մատուռ	12-13 դդ.		10.3/106.2	<	ավերված

Գյուլատեղի «Փոքր Դիլի» («Պունուր Դիլի»)	7-18 դդ.	քաղաքից («Իմպուլս» գործարանից) 2 կմ հվ-աե, Աղստն գետի աջ ափին, անտառի բացատում	10.3/107	<	ավերված
Գերեզմանոց	7-17 դդ.	գյուլատեղիի հվ մասում	10.3/107.1	<	կիսավեր
Խաչքար	7 դ.		10.3/107.1 .1	<	
Խաչքար	12-13 դդ.		10.3/107.1 .2	<	գլխիվայր դրված է 12-13 դդ. մեկ այլ խաչքարի վրա
Խաչքար	12-13 դդ.		10.3/107.1 .3	<	
Խաչքար	14-15 դդ.		10.3/107.1 .4	S	պարզունակ
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	Կալինինի փող.	10.3/108	<	հայտնաբերվել է 2003 թ.
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	քաղաքի հվ մասում, Գոլովինո թաղամասից հս, «Խրտանոց» վայրում	10.3/109	<	ավերվել է Դիլիջան-Երևան մայրուղու կառուցման հետևանքով
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	Թեղուտ թաղամասից 1.5 կմ հս-աե, «Տախտ» («Թաղթա») տեղամասում	10.3/110	<	տարածքի մի մասը մեղիորացված
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	քաղաքից 3 կմ հս-աե, Աղստն գետի աջ ափին, Գոմաձոր տանող ճանապարհի եզրին	10.3/111	S	տարածքի մի մասը մնացել է վարելահողերի տակ
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	քաղաքից 3 կմ հվ, «Մեծ թալա» գյուլատեղիի տարածքում	10.3/112	<	տարածքի մի մասը վերածվել է վարելահողերի
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	քաղաքից 8 կմ հս-ամ, «Շլորկուտ» տանող ճանապարհի ն	10.3/113	<	կիսավեր
Դամբարանադաշտ «Ռեդկին-լագեր»	Ք.ա. 13-8 դդ.	քաղաքից 6 կմ հս-աե, Դիլիջան-Իջևան	10.3/114	<	ավերված

		մայրուղուց 5 կմ հվ-աե,			
--	--	---------------------------	--	--	--

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան .	հավելյալ նշումներ
		Պարզ լիճ տանող ճանապարհի 1-ին կմ-ի վրա			
Եկեղեցի	17-18 դդ.	Շամախյան թաղամասում	10.3/115	S	
Խաչքար	12-13 դդ.	հենած է եկեղեցու հվ պատին	10.3/115.1	<	
Խաչքար	1221 թ.	ագուցված է եկեղեցու հվ պատին	10.3/115.2	<	
Խաչքար	13 դ.	հենած է եկեղեցու ամ պատին	10.3/115.3	<	
Խաչքար	11-12 դդ.	ագուցված է «Իմպուլս» գործարանի հանգստյան տան ամ պատին, արտաքուստ	10.3/116	<	1986 թ. տեղափոխել են «Բախտիար» գյուղատեղիի գերեզմանոցի g
Խաչքար	13 դ.	նախորդի կողքին	10.3/117	<	1986 թ. տեղափոխել են «Բախտիար» գյուղատեղիի գերեզմանոցի g
Խաչքար	13-14 դդ.	«Դիլիջան» հանքային ջրերի գործարանից 200 մ հեռու, գետի աջ ափին, աղբյուրի մոտ	10.3/118	<	
Կամուրջ	19 դ.	քաղաքից 4 կմ աե, Գոշ գյուղ տանող նախկին ճանապարհին, Աղստե գետի վրա	10.3/119	S	միաթռիչք
Հուշաղբյուր	1935 թ.	քաղաքի մեջ, Գորկու փող. վրա՝ Գոլովինո տանող ճանապարհի աջ կողմում	10.3/120	S	
Հուշաղբյուր	1948-1949 թթ.	քաղաքի մեջ, Դիլիջան-Տաշիր ճանապարհի աջ կողմում	10.3/121	<	

Հուշաղբյուր Մատինովի	1880 թ., վերակառ. 1936 թ.	Մյասնիկյան փող.	10.3/122	S	կառ.՝ գինեվաճառ Մատինով
Հուշաղբյուր «Ոսկի աղբյուր»	19 դ.	Հակոբջանյան փող.	10.3/123	S	Դիլիջանի ամենահին աղբյուրն է, կառուցել են Գյուլզադյանները
Հուշարձան Երկրորդ	1975 թ.	քաղաքի ամ կողմում, բլրի գագաթին	10.3/124	S	հեղ.՝ Ս. Մեհրաբյան, Խ.

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
աշխարհամարտում զոհվածներին					Վաթինյան
Հուշարձան Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման 50 ամյակին	1970 թ.	քաղաքի մեջ, Իջևան- Թբիլիսի և Դիլիջան- Վանաձոր ավտոճանապարհների խաչմերուկում, բարձունքի վրա	10.3/125	<	հեղ.՝ Խ. Վաթինյան, Ա. Թարխանյան, Ս. Ավետիսյան
Հուշարձան Մայիսյան ապստամբության մասնակիցներին	1982 թ.	Մյասնիկյան փող.	10.3/126	S	հեղ.՝ Ս. Ավետիսյան, Ա. Փարսյան
Մատուռ	10-12 դդ.	քաղաքի Գոլովինո թաղամասում, «Միկիտանի թալա» վայրում	10.3/127	S	պահպանվել են խորանի հատվածը, հս և ամ պատերը
Գերեզմանոց	10-15 դդ.	մատուռի մոտ	10.3/127.1	S	
Խաչքար Մամախաթունի	13-14 դդ.	մատուռի ամ կողմում	10.3/127.1 .1	<	
Խաչքար	15 դ.	նախորդի մոտ	10.3/127.1 .2	S	
Մատուռ	19 դ.	քաղաքից 7 կմ հս- ան, Շամախյան թաղամասի ֆերմաների մոտ	10.3/128	S	
Մատուռ Սբ. Սարգիս	18-19 դդ.	Շամախյան թաղամասի հվ-ան եզրին, բարձունքի վրա	10.3/129	S	կիսավեր
Գերեզմանոց	19-20 դդ.		10.3/129.1	S	

Խաչքար	11 դ.	ագուցված է մատուռի աե պատին, ներքուստ	10.3/129.2	<	արձանագիր
Խաչքար	11 դ.	մատուռում	10.3/129.3	<	
Խաչքար	13-14 դդ.	մատուռում	10.3/129.4	<	արձանագիր
Շենք Աղասի Խանջյանի ամառանոցի	1936 թ.	Մ. Գորկու փող. 15 ա	10.3/130	<	վթարային, փլուզվել է 2013 թ
Շենք Գրադարանի	1974 թ.	Մյասնիկյան փող. 61	10.3/131	S	
Հուշարձան Խ.Աբովյանին	1976 թ.	գրադարանի մուտքի մոտ	10.3/131.1	S	
Հուշարձան Ղ. Աղայանին	1976 թ.	գրադարանի մուտքի մոտ	10.3/131.2	S	
Շենք «Դիլիջան» առողջարանի	1977 թ.	Գետափնյա փող 7	10.3/132	<	նախկինում՝ «Պապանինո» առողջարան

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
Շենք «Դիլիջան» հանքային ջրերի գործարանի	1949 թ.	քաղաքից մոտ 5 կմ հվ	10.3/133	<	
Շենք երկրագիտական թանգարանի	1952 թ.	քաղաքի կենտրոնում	10.3/134	<	
Խաչքար	13 դ.	թանգարանում	10.3/134.1	S	բերվել է «Տախտ» հանդամասից
Խաչքար Լույսի և Կիրակոսի	13-14 դդ.	թանգարանում	10.3/134.2	S	բերվել է «Տախտ» հանդամասից
Շենք «Լեռնային Հայաստան» առողջարանի	1959 թ.	Կամոյի փող. 141 բ	10.3/135	<	
Շենք Կինգործիչների հանգստյան տան	1981 թ.	քաղաքից 2 կմ հեռավորության վրա, Պարզ լիճ տանող ճանապարհին	10.3/136	<	
Շենք Կոմպոզիտորների ստեղծագործական տան	1975 թ.	քաղաքից 8 կմ հեռու, Դիլիջան-Երևան մայրուղու վրա, «Հաղարծին» ռեստորանի դիմաց	10.3/137	<	

Շենք Հակատուրերկույոզ ային հիվանդանոցի (Գյանջեյանի անվան)	1921-22 թթ.	քաղաքի ամ մասում, Դիլիջան-Իջևան մայրուղու ձախ կողմում	10.3/138	<	
Շենք Մանկական առողջարանի	1975 թ.	քաղաքից 2 կմ հս, «Թախտա» վայրում	10.3/139	<	
Շենք Մշակույթի տան	1972 թ.	Մյասնիկյան փող. 53	10.3/140	S	
Շենք Ռեդկինի ճամբարի	1890-ական թթ.	քաղաքի հս մասում, Դիլիջան-Իջևան հին ճանապարհի աջ կողմում	10.3/141	<	Դիլիջանի լեռնանցքի ճանապարհա- շինարար Ռեդկինի ճամբարի գլխավոր մասնաշենքն է
Շենք Տուրերկույոզային հանրապետական հիվանդանոցի (Գ. Սադյանի անվան)	1927 թ.	քաղաքի ամ մասում, Դիլիջան-Իջևան մայրուղու ձախ կողմում	10.3/142	<	
Շենք Տուրիստական	1969 թ.	Գետափնյա փող. 9	10.3/143	<	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
հանգրվանի					
Շենք Քաղաքապետարան ի	1975 թ.	Մյասնիկյան փող. 55	10.3/144	S	
Վանական համալիր Մաթոսավանք	13 դ.	քաղաքից 3.5 կմ ամ, գետի աջափնյա անտառածածկ սարահարթի վրա, Ջուխտակ վանքի դիմացի լեռնալանջին	10.3/145	<	կառ.՝ Հորդանան
Գավիթ	13 դ.	կից է եկեղեցուն ամ-ից	10.3/145.1	<	
Խաչքար	13 դ.	ագուցված է գավթի աե պատին	10.3/145.1 .1	<	
Խաչքար	13 դ.	նախորդի մոտ	10.3/145.1 .2	<	
Խաչքար	13 դ.	նախորդի մոտ	10.3/145.1 .3	<	

Խաչքար	13 դ.	Նախորդի մոտ	10.3/145.1.4	<	
Խաչքար	13 դ.	Նախորդի մոտ	10.3/145.1.5	<	
Խաչքար	13 դ.	Նախորդի մոտ	10.3/145.1.6	<	
Գերեզմանոց	միջնադար	համալիրի տարածքում	10.3/145.2	<	
Խաչքար Մխիթարի	1251 թ.	Եկեղեցու հս պատի տակ, արտաքուստ	10.3/145.2.1	<	
Գրատուն	13 դ.	կից է գավթի հվ պատին	10.3/145.3	<	կիսավեր
Խաչքար	13 դ.	ագուցված է գրատան աե պատին, մուտքից հս	10.3/145.3.1	<	
Խաչքար	13 դ.	նույն պատին, մուտքից վերև	10.3/145.3.2	<	
Խաչքար	13 դ.	Նախորդի մոտ	10.3/145.3.3	<	
Խաչքար	13 դ.	նույն պատին, մուտքից հվ	10.3/145.3.4	<	
Խաչքար	13 դ.	ագուցված է գրատան հվ պատին	10.3/145.3.5	<	
Խաչքար	13 դ.	ագուցված է հվ պատին, խորշի մեջ	10.3/145.3.6	<	
Խաչքար	13 դ.	նույն պատին, խորշից վերև	10.3/145.3.7	<	
Եկեղեցի Սբ. Աստվածածին	1247 թ.		10.3/145.4	<	փոքր, թաղածածկ
Խաչքար	13 դ.	ագուցված է եկեղեցու ամ	10.3/145.4	<	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ	նշան	հավելյալ նշումներ
Սանասարի		պատին, մուտքից հս (գավթի աե պատնե)	.1		
Վանական համալիր Զուխտակ (Գիշերավանք, Պետրոսի վանք)	12-13 դդ.	Դիլիջանից 3 կմ հս-ամ, Խալ-Խալլու լեռան հվ անտառապատ լանջին, «Թթուջուր» աղբյուրից ոչ հեռու	10.3/146	<	
Գերեզմանոց	13-17 դդ.	համալիրի տարածքում	10.3/146.1	<	
Տապանաքար Խաչատուր վարդապետի	1250 թ.		10.3/146.1.1	<	հարթ

Տապանաքար Պողոսի	1610 թ.		10.3/146.1 .2	<	օրորոցաձև
Եկեղեցի Սբ. Աստվածածին	1201 թ.		10.3/146.2	<	թաղածածկ, կառուցել է վանքի առաջնորդ Հայրապետը, ճարտ.՝ Սարգիս վարդպետ
Խաչքար	12 դ.	Եկեղեցու ամ պատի մոտ, մուտքից հվ	10.3/146.2 .1	<	ընդհանուր պատվանդանի վրա, երկատված
Խաչքար	13 դ.	Նախորդից հվ	10.3/146.2 .2	<	ընդհանուր պատվանդանի վրա
Խաչքար	13 դ.	Եկեղեցու հվ-ամ անկյան մոտ	10.3/146.2 .3	<	ընդհանուր պատվանդանի վրա
Խաչքար	13 դ.	Եկեղեցու ամ պատի մոտ, մուտքից հս	10.3/146.2 .4	<	ընդհանուր պատվանդանի վրա, երկատված
Խաչքար	13 դ.	Նախորդից հս	10.3/146.2 .5	<	
Եկեղեցի Սբ. Գրիգոր	12 դ. վերջ	Սբ. Աստվածածին Եկեղեցուց 20 մ աե	10.3/146.3	<	կենտրոնագմբեթ
Խաչքար	13 դ.	Եկեղեցու խորանում	10.3/146.3 .1	<	ծառայում է իբրև վեմքար

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծման ընթացքում գնահատվել են շինարարական և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա ակնկալվող հնարավոր ազդեցությունները:

Կատարվել է շինարարական աշխատանքների նախապատրաստման, շինհրապարակների կազմակերպման և բուն շինարարության ժամանակ հավանական ազդեցությունների գնահատում և առաջարկվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

Նախապատրաստական աշխատանքները նախատեսում են.

- օրենքով սահմանված բոլոր անհրաժեշտ թույլտվությունների, հավաստագրերի ձեռքբերումը,
 - շին. ճամբարների ու շինանյութերի պահեստավորման տարածքների պլանավորումը,
 - օդի, հողի, ջրերի աղտոտումը կանխարգելող միջոցառումների ապահովումը,
 - արտակարգ իրավիճակների կառավարման պլանի առկայությունը և այլն:
- Շինարարության կապալառուի բնապահպանական, սոցիալական և անվտանգության հարցերով ինժեները պետք է գնահատի բոլոր հնարավոր ռիսկերը և սահմանի դրանց կառավարման պլանը, անվտանգության հրահանգները: Իրականացված ուսումնասիրությանների արդյունքում պարզվել է, որ նախատեսվող գործունեության իրականացման/շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ: Ազդեցությունները կլինեն ժամանակավոր և կարող են արդյունավետորեն կառավարվել մեղմացուցիչ միջոցների կիրառմամբ: ԲԿՊ-ն և մոնիթորինգի ծրագիրը կիրականացվի կապալառուի կողմից շինարարության փուլում, իսկ ԲԿՊ-ի համապատասխան դրույթները կընդգրկվեն շինարարական աշխատանքների պայմանագրերի ընդհանուր մասնագրերում՝ ԲԿՊ-ի իրականացումն ապահովելու համար: Բնապահպանական մոնիթորինգի պլանը կազմելու է մրցութային փաստաթղթերի բաղկացուցիչ մաս:

Շինարարության փուլում կանխատեսվում են հետևյալ հիմնական ազդեցությունները.

7.1. Օդային ավազանի աղտոտվածություն

Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՇՄՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի

օքսիդների, ածխածնի օքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման: Հաշվի առնելով այն, որ Դիլիջան համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 3-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի: Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից առաջարկած համապատասխան ձեռնարկ-ուղեցույցից:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Դիլիջան համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 23700 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ.3), Մասիս համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. փոշումասնիկներ՝ 0,3մգ/մ³, ածխածնի մոնօքսիդ՝ 0,8 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,015 մգ/մ³ և ծծմբի երկօքսիդ՝ 0,05 մգ/մ³:

Նշված մակարդակները գտնվում են ՀՀ գործող նորմերի (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.) սահմանում, բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց ֆոնային կոնցենտրացիան մոտ 1.5 անգամ գերազանցում է գործող ՍԹԿ-ն (ՍԹԿ_{փոշի} = 0,15 մգ/մ³):

Աղ. 3 Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի (2011թ.-ի մարդահամար):

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ³)			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

7.2 Մթնոլորտ արտանտվող նյութերի հաշվարկ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են հողային աշխատանքների ժամանակ առաջացող փոշին և շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները (վառելիքի այրման արդյունքում): Շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները, որոնք պլանավորվում է օգտագործել գործունեության իրականացման ժամանակ, հանդիսանում են չկազմակերպված արտանետումների հիմնական աղբյուրները: Ջրագծի կառուցման ընթացքում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times B \times G \times 10^6 / 3600, \text{ գ/վ}$$

որտեղ՝

K_1 –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K_2 –ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէռոզոլային մասնիկների, 0.02

K_3 –ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 2.5

K_4 –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K_5 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K_6 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B –ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների ընդհանուր տևողությունը հաշվարկվում է մոտ 20 օր կամ

12 օր x 8 ժամ = 160 ժամ/շինարարություն:

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը գնահատվում է 384,3 խ.մ

G - 384,3մ3 : 160 ժամ = 2,402 մ3 /շին. ժամ կամ հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ 2,402 մ3 /ժամ x 2.7 տ/մ3 = 6,46 տ/շին.:

$Q = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.2 \times 0.5 \times 6,46 \times 106 \times 0.6 \times 1.0) / 3600 = 0.11$ գ/վրկ

$0.11 \text{ գ/վրկ} \times 160 \text{ ժամ} \times 3600 \text{ վրկ/ժամ} : 1000000 = 0.063$

տ/շին.ժամանակահատված:

7.2.1 Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները

Մթնոլորտային օդը աղտոտվում է ծանր տեխնիկայի աշխատանքի ընթացքում՝ դիզելային վառելիքի այրման հետևանքով առաջացած արտանետումներով, որոնք հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակված

<<Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման>> մեթոդական հրահանգի հիման վրա: Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները (բացառությամբ ծծմբային անհիդրիդի) բերված են ստորև:

Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Աղյուսակ 11.

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO _x	CH	SOU	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները, կախված ավտոմոբիլային պարկի միջին տարիքից և տեխնիկական վիճակից, բերված են ստորև աղյուսակ 7-ում:

Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները

Աղյուսակ 12.

Ավտոմեքենաների կատեգորիան	Վնասակար նյութը	Ազդեցության գործակիցը	
		պարկի միջին տարիքը	տեխնիկական վիճակը
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	1.33	1.8
	CH	1.2	2.0
	NO _x	1.0	1.0
	CO ₂	1.0	1.0
	N ₂ O	1.0	1.0

Ածխածնի օքսիդի (CO), ածխաջրածինների (CH), ազոտի օքսիդների (NO_x) գործակիցները վերցված են <<Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ

արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներից>> (Մոսկվա, Հիդրոմետհրատ - 1983), իսկ ածխածնի երկօքսիդի (CO_2) և ազոտի երկօքսիդի (N_2O) գործակիցները ընդունվել են 1, քանի որ որևէ այլ մեծություններ դրանց համար չեն առաջարկվում:

Ընդամենը շինարարության ընթացքում շահագործվելու են 1 հատ տեխնիկական միջոց, որն օգտագործում է դիզելային վառելիք: Դիզելային միջին օրական ծախսը կկազմի՝ 20-30 և, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $30 \times 0.835 = 25.05$ կգ/օր:

Հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքներին մասնակցելու է ընդամենը մեկ բեռնատար մեքենա և առավելագույնը 6 օր, դիզելային վառելիքի այրման արդյունքում տեղի կունենա չնչին արտանետումներ, այդ պատճառով էլ հաշվարկ չի իրականացվել:

7.2.2 Մթնոլորտ վնասակար արտանետումների հաշվարկը

Սույն մեթոդակարգը մշակված է այն նյութերի ազդեցության գնահատման համար, որոնց սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նորմատիվները գերազանցել են, սակայն հաշվի առնելով, որ նախկին բոլոր մեթոդակարգերը ՀՀ կողմից ներկայացված չեն և չեն գործում, վնասի հաշվարկը կատարված է վերը նշված մեթոդակարգով:

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \sum_{q=1}^Q \Phi_q \sum_{i=1}^I V_i P_i \quad (1),$$

որտեղ՝

U –ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով,

$\sum_{q=1}^Q$ –ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9 աղյուսակի արգելոցների տարածքի համար, որի շարքին դասվում է տարածքը շինարարության իրականացման ընթացքում, ընդունվում 10:

V_i –ն i -րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, ածխածնի օքսիդի համար ընդունվում է 1, ազոտի երկօքսիդի համար՝ 12.5, անօրգանական փոշու, եռակցման աերոզոլի համար՝ 25, ծծմբի անհիդրիդի համար՝ 16.5, ածխաջրածինների համար՝ 3, պինդ մասնիկների համար՝ 25, մանգանի օքսիդների համար՝ 705:

P_i –ն տվյալ (i -րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, Φ_q -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից:

Սույն կարգի համաձայն $\Phi_g = 1000$ դրամ:

Φ_i գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝ $\Phi_i = q (3 S_{ui} - 2 U\theta U_i)$, $S_{ui} > U\theta U_i$ (2)

որտեղ՝

$U\theta U_i$ -ն i -րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով: հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում ցրման հաշվարկները ցույց տվեցին, որ սպասվելիք մերձգետնայ կոնցենտրացիաները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում, փաստացի արտանետումները ընդունվում են որպես $U\theta U_i$:

S_{ui} -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով $q = 1'$ անշարժ աղբյուրների համար,

$q = 3'$ շարժական աղբյուրների համար

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային ծավալային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Անջատվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վ	Շգ	Տնտեսական վնասը, դրամ
	Si	q	Քi = Si x q			Ա = 1000ՇգՓgΣ ՎiՔi
Անշարժ աղբյուրներ						
Անօրգանական փոշի	0.07	1	0.07	10	10	7

Ներկայացված գումարը արտահայտում է վնասակար նյութերի հետևանքով տնտեսությանը հասցված հարաբերական (բերված) վնասի դրամային արտահայտությունը:

7.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Աշխատանքների ժամանակ թրթռումների ազդեցությունը կլինի չնչին: Աղմուկի ազդեցությունը պայմանավորված կլինի շինտեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ: Օգտագործվող շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները ընտրվելու են այն նախապայմանով, որ դրանց տեխնիկական ցուցանիշներում աղմուկի մակարդակը չգերազանցի 80 դԲա-ն: Այս ցուցանիշը թույլ կտա ապահովել աշխատանքային տեղամասերի սանիտարական նորմերը, իսկ հաշվի առնելով հեռավորությունը բնակելի թաղամասերից՝ 0.5 կմ և ավելի, ազդեցությունը բնակավայրերում գործնականում չի զգացվի:

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

7.4 Զրոգտագործում և ջրահեռացում

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինարարական հրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինարարական աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար:

Շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատողների համար խմելու և կենցաղային կարիքների համար նախատեսված անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը շինարարության շրջանում նախատեսվում է իրականացնել խմելու ջուրը տարրաներով բերելու եղանակով (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը պայմանագիր կկնքի ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրամատակարար կազմակերպության հետ):

Շինարարական հրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինարարական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ որակի ջրաքանակի ապահովումը նախատեսվում է իրականացնել մեքենաներով բերելու եղանակով՝

(մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքի ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրամատակարար կազմակերպության հետ):

7.5 Հողային ռեսուրսներ

Նախագծով նախատեսված ջրագծերի կառուցման տարածքները աղտոտված չեն կենցաղային կամ արտադրական թափոններով: Թեև աշխատանքների իրականացումը չի ենթադրում մեծ ծավալի թափոնների առաջացում, սակայն հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

-Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

-Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

-աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

-տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

7.6 Թափոններ

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը, շինարարական աղբը և քանդված հանված հողային զանգվածի որոշ մաս, որը չի օգտագործվելու հետլիցքի նպատակով: Առաջացող և ճանապարհի հարակից հատվածներում գոյություն ունեցող շինարարական աղբը, ինչպես նաև հողի ավելցուկային զանգվածը կտեղափոխվի Դիլիջանի համայնքապետարանի կողմից հատկացված համապատասխան վայր, իսկ կենցաղային աղբի տեղափոխման համար կկնքվի պայմանագիր աղբահեռացումն ապահովող համապատասխան կազմակերպության հետ:

Թափոնների առաջացման աղբյուրները կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝

Հիմնական՝ շինարարություն,

Օժանդակ՝ ավտոտրանսպորտային և շինարարական տեխնիկայի սպասարկում, մատակարարում, աշխատողների կենցաղային սպասարկում:

Խառը Շինարարական թափոններ՝ 5.0 խմ /ծածակագիրը՝ 399013000105/:

Ծրագրով նախատեսված աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական աղբը կտեղափոխվի Դիլիջանի համայնքապետարանի հետ համաձայնեցված համապատասխան աղբավայրը:

Քանդված հանված հողային զանգվածի մնացորդային ՝ 6.0 խմ

/ծածակագիրը՝ 31401100 08 99 5/ կտեղափոխվի Դիլիջանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Օժանդակ գործընթացների թափոններ

ա) Բանեցված շարժիչների յուղերի թափոններ՝ 2,0 լ (ծածկագիր՝ 5410020102033) Առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շարժիչների շահագործման արդյունքում: Յուղերը հաշվարկված են որոշակի ժամանակամիջոցի համար, որից հետո կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները փոխարինվում են նոր քանակներով: Օգտագործված յուղերը կուտակվելու են մետաղյա տարողություններում, այնուհետև տրվելու են օգտագործված յուղերի վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված ընկերություններին:

բ) Կենցաղային աղբ (ծածակագիրը՝ 91200400 01 00 4) - կառաջանա 414 կգ ընդհանուր քանակությամբ՝ բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների կենցաղային սպասարկման, ինչպես նաև վարչական գործունեության արդյունքում: Այն նախատեսվում է կուտակել աղբամաններում և ըստ համապատասխան պայմանագրի տեղափոխել ՏԻՄ-երի կողմից հատկացված աղբավայր:

գ) Եռակցման էլեկտրոդների մնացորդները կհավաքվեն հատուկ մետաղական տարաներում և ժամանակավորապես կպահվեն եռակցման վայրի մոտ, այնուհետև կտեղափոխվեն հատուկ կազմակերպության կողմից: Եռակցման աշխատանքների ընթացքում առաջացող հիմնական թափոնը եռակցման խարամն է, որը համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ-ի N 430-Ն որոշման ունի վտանգավորության 4-րդ դաս՝ 3140480001994 ծածկագրով:

Շինարարության փուլում կենցաղային աղբի հաշվարկները Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով. $M=n*m$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է $M=21*120= 2520$ կգ/տ կամ 6.9 կգ/օր

Շինարարությունը տևելու է 60 օր, հետևաբար ողջ շինարարական ժամանակահատվածի համար:

$M=6.9* 60= 414$ կգ

Շինարարության, ինչպես նաև շահագործման փուլերում կենցաղային աղբի հեռացումը տարածքից իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Կապալառուն պետք է աշխատանքները կազմակերպի այնպես, որ կանխի շրջակա միջավայրի աղտոտումը շինարարական թափոնների, նավթամթերքների, քիմիական նյութերի միջոցով: Կապալառուն պարտավոր է ապահովել թափոնների և շինարարական աղբի հեռացումը:

Թափոնների հեռացումը չպետք է հանգեցնի ստորջրյա ջրերի աղտոտմանը: Կապալառուն պարտավոր է նախատեսել շինարարական փոշուց օդի աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումներ: Օժանդակ շինությունները, պահեստները, բնակելի շենքերը պետք է տեղակայվեն,

հնարավորության դեպքում, շինհրապարակի ներսում:

Աշխատանքի ընթացքում առաջացած կենցաղային թափոնների համար կտեղադրվեն մետաղական աղբամաններ, որոնց պարունակությունը շինարարական աղբի հետ միասին պարբերաբար կտեղափոխվի մոտակա համապատասխան աղբավայր: Կոշտ կենցաղային աղբը նախատեսվում է տեղափոխել աղբավայր, որը գտնվում է Հաղարծինից 5կմ հեռավորության վրա: Թափոնների հեռացման վճարը հաշվարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի դրույթներին համապատասխան:

Օրենսգրքի համաձայն՝ կենցաղային և շինարարական աղբի համար վճարը կազմում է 60 դրամ/տ. IV վտանգավոր դասի թափոնների համար վճարը՝ 1500 դրամ/տ:

Աղյուսակ 13. թափոնների հեռացման վճար

N°	Անվանում	Թափոնների քանակությունը, տ	Գումար, դրամ
1	Շինարարական աղբ	2.2	132
2	Եռակցման էլեկտրոդի կոճղեր (եռակցման խարամ)	0.1	150
3	Կենցաղային կոշտ թափոններ	0.4	24
	Ընդամենը		306

Ավելցուկային բուսահողի օգտագործումը կանաչապատման նպատակով, իսկ մնացորդային հողային զանգվածի օգտագործումը ճանապարհների վերականգնման համար պետք է իրականացվի ազդակիր համայնքների ղեկավարների հետ համաձայնեցված:

Թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը:
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում:
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

7.7 Սոցիալական ազդեցություն

Շինարարության ընթացքում շինարարական հրապարակի հարակից տարածքներում բնակվող բնակիչները կարող են ենթարկվել սոցիալական բնույթ կրող որոշակի անբարենպաստ ազդեցությունների (աղմուկ, փոշի, երթևեկության ժամանակավոր խաթարումներ և այլն), որոնք միասին կարող են առաջացնել գումարային ազդեցություններ: Սակայն դրանք տեղի են ունենալու միայն շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, լինելու են կարճաժամկետ և էականորեն մեղմացվելու են հատուկ միջոցառումների իրականացման շնորհիվ:

Շինարարական աշխատանքներից հետո, մինչ օբյեկտը վերջնական հանձնելը, կապալառուն պարտավոր է լինելու բարեկարգել տարածքը՝ հեռացնելով շինարարության հետ կապված նյութերն ու թափոնները:

Փոշին, դիզելային վառելիքի այրման արգասիքները, աղմուկի մակարդակի ավելացումը նույնպես բացասաբար կարող է անդրադառնալ բնակչության վրա, իսկ երթևեկության հնարավոր ինտենսիվացումը ժամանակավոր անհարմարություններ կարող է ստեղծել գոյություն ունեցող ճանապարհով շինարարական աշխատանքներում ներգրավված մեքենաների երթևեկության պատճառով:

Հարկ է նշել, որ շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բանվորական և սպասարկող անձնակազմը կհավաքագրվի տեղի բնակչությունից, ինչը դրական ազդեցություն կունենա բնակչության կենսամակարդակի վրա:

Նախատեսվող գործունեության արդյունքում բարելավվելով ջրամատակարարման համակարգը Աղավնավանք և Հաղարծին բնակավայրերում կլուծվեն մի շարք սոցիալական խնդիրներ, կստեղծվեն ժամանակավոր աշխատատեղեր և տնտեսական օգուտներ՝ տեղի բնակիչներին ներգրավելով իրականացվելիք շինարարական աշխատանքներում::

7.8 Գումարային ազդեցություն

Նախատեսվող գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար, անհրաժեշտ է այն դիտարկել տարածքի նմանատիպ աղտոտող գործոնների հետ համալիր:

«Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Աղավնավանք և Հաղարծին բնակավայրերում ջրագծի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում» նախագծի իրականացումը նախագծված տարածքում և

տվյալ շինարարական ժամանակահատվածում իր բնույթով և ծավալով լինելու է միակը, քանի որ այլ աշխատանքներ և գործունեություններ չկան գործունեության հարակից տարածքներում, որոնք կարող են ունենալ գումարային ազդեցություն, ինչպես ջրագծի շինարարության այնպես էլ շահագործման ընթացքում: Տեխնաձին ազդեցության տեսակետից ճանապարհի երկարությամբ հիմնական աղտոտման աղբյուրներ են հանդիսանում ավտոճանապարհով անցնող ավտոտրանսպորտային միջոցները: Քանի որ իր բնույթով տրանսպորտային երթևեկությունը տարբերվում է, հետևաբար հավաքական արդյունք չի սպասվում:

7.9 Աշխատողների սանիտարակենցաղային և հիգիենիկ պահանջներ

Ըստ շինարարության կազմակերպման նախագծի և համաձայն «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի, աշխատողների սանիտարակենցաղային պայմանները ապահովելու նպատակով շինհրապարակը հագեցված է լինելու՝

- աշղեկի շարժական տնակով,
- բիոզուգարանով,
- հանդերձարանով
- լվացարանով,
- հանգստի սենյակով
- սննդի ընդունման շարժական կետով
- աշխատողների կարիքների համար անհրաժեշտ ջրի տարա,

Շինհրապարակը առանձնանալու է ճանապարհը փակող նշաններով՝ անվտանգության նորմատիվների համաձայն:

Շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատողների համար խմելու և կենցաղային կարիքների համար նախատեսված անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը շինարարության շրջանում նախատեսվում է իրականացնել խմելու ջուրը տարրաներով բերելու եղանակով (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքվի ջրամատակարար կազմակերպության հետ),:

Կենցաղային նպատակներով օգտագործված ջուրը հավաքվելու է անջրթափանց պատերով համապատասխան տարրայի մեջ և տարածքից հեռացվելու է տվյալ ոլորտում ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքի տվյալ ոլորտում մասնագիտական ծառայություն մատուցող՝ ՀՀ Օրենսդրության պահանջներին համապատասխան գործող կազմակերպության հետ):

Շինհրապարակում բիոզուգարանի տեղադրումը և հետագա սպասարկումը իրականացվելու է տվյալ ոլորտում մասնագիտական ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով:

Ամփոփելով շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները, հարկ է նշել, որ այդ աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները և առավելագույնս պահպանվի բնական լանդշաֆտը, որի համար հիմք կհանդիսանա բնապահպանական կառավարման պլանում սահմանված բնապահպանական և սոցիալական ռիսկերի մեղմացման միջոցառումների պատշաճ իրականացումը:

8 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ԶԱԳ + ՕԱԳ$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ.

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն.

ԶԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն.

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Քանի որ, ներկայացված գործունեության ազդեցությունը տարածվում է միայն մթնոլորտային օդի վրա, ապա, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն գնահատվել է ազդեցությունը;

8.1 Մթնոլորտային օդ

Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն գործող մեթոդակարգի [1]: Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա = \sum C_q \cdot \Phi_q + \sum U_i \cdot P_i, \text{ դրամ Որտեղ՝}$$

Ա - ազդեցությունն է, արտահայտված ՀՀ դրամով,

C_q - աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված մեթոդակարգի աղյուսակ 9-ի՝ բնապահպանական տարածքների համար, որի շարքին դասվում է նախատեսվող տարածքը, ընդունվում է 2,

Φ_q - փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն մեթոդակարգի համաձայն Φ_q հավասար է 1000 դրամ,

U_i - i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, ածխածնի օքսիդի համար ընդունվում է 1, ազոտի օքսիդի համար՝ 12.5, ածխաջրածինների համար՝ 3.16, պինդ մասնիկների համար՝ 200, ծծմբային անհիդրիդի համար՝ 16.5:

P_i - տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, տվյալ դեպքի համար որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$P_i = q \cdot SU_i$$

Որտեղ՝

SU_i - i-րդ նյութի տարեկան փաստացի արտանետումն է՝ տոննայով,

- ածխածնի օքսիդ՝ 0.0081 տ (շարժական աղբյուր),
- ազոտի օքսիդներ՝ 0.0037 տ (շարժական աղբյուր),
- ածխաջրածիններ՝ 0.00088 տ (շարժական աղբյուր),
- պինդ մասնիկներ՝ 0.0003 տ (շարժական աղբյուր),
- ծծմբային անհիդրիդ՝ 0.00049 տ (շարժական աղբյուր), $q = 3$ ՝ շարժական աղբյուրների (ավտոտրանսպորտի) համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային ծավալային կոնցենտրացիան պետական ստանդարտով սահմանված չէ, ազդեցությունը չի գնահատվում:

Այսպիսով,

$$Ա = 2 \cdot 1000 \cdot \{1 \cdot 3 \cdot 0.0081 + 12.5 \cdot 3 \cdot 0.0037 + 3.16 \cdot 3 \cdot 0.00088 +$$

200 · 3 ·

$0.0003 + 16.5 \cdot 3 \cdot 0.00049\} = 511,3$ դրամ:

8.2 Զրային ռեսուրսներ

Զրագծի կառուցման շինարարական աշխատանքների ժամանակ աղտոտված կեղտաջրերի արտահոսք դեպի ջրային ռեսուրսներ չի իրականացվում, համապատասխանաբար ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում և տնտեսական վնաս չի հաշվարկվում:

8.3 Հողային ռեսուրսներ

Կառուցվող խողովակաշարերն հիմնականում անցկացվելու են գոյություն ունեցող ճանապարհի հարևանությամբ: Շինարարական աշխատանքների իրականացմանը խոչընդոտող ծառափային բուսականությունը բացակայում է:

Բ

ոլոր շինարարական աշխատանքներն իրականացվելու են ջրագծի օտարման գոտում, շինհրապարակները ձևավորվելու են ճանապարհի երկայնքով:

Այսպիսով, ջրագծի կառուցման աշխատանքների արդյունքում հողի օգտագործման նշանակությունը չի փոխվում, հողին վնաս չի հասվում, ինչից ելնելով հողին հասցվող տնտեսական վնաս չի հաշվարկվում:

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

9.1 Բնապահպանական և սոցիալական ազդեցությունները

Շինարարության փուլում հնարավոր է դիտվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության մի շարք բացասական երևույթները, ինչպես օրինակ՝ մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների աղտոտում, հողերի և լանդշաֆտի դեգրադացիա, հողերի էրոզիա, որը կարող է առաջանալ փորված/հանված հողի և շինարարական թափոնների ոչ պատշաճ հեռացման/ տեղադրման, շինարարության ընթացքում վառելիքաքսուկային և այլ նյութերի արտահոսքի, ժամանակավոր շինհրապարակների օգտագործման (շին. ճամբարներ, մեքենաների ավտոկայանատեղեր, պահեստավայրեր և այլն), օդի ժամանակավոր աղտոտում՝ կապված շինարարության ընթացքում բեռնատարների երթևեկության գրաֆիկի հետ, փորման աշխատանքների ժամանակ աղմուկ և տատանումներ, երթևեկության խաթարում՝ պայմանավորված շին.մեքենաների և սարքավորումների շարժման հետ, ինչպես նաև հնարավոր ազդեցություններ բուսածածկի վրա:

Ծրագրի շինարարության փուլում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները ներկայացվում են ստորև:

(ա) Շրջակա միջավայրի օդի աղտոտում

Շինարարական աշխատանքների ընթացքում փորման-բեռնման աշխատանքների արդյունքում առաջանում են անօրգանական փոշու արտանետումներ: Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի աշխատանքի ընթացքում առաջանում են փոշու /երթնեկության ժամանակ/ և դիզելային վառելիքի այրման ընթացքում ծխագազերի արտանետումներ: Եռակցման աշխատանքների ընթացքում առաջանում են եռակցման աերոզոլի և մանգանի օքսիդների արտանետումներ:

Ստորև ներկայացված են արտանետումների հիմնական աղբյուրները.

- անօրգանական փոշու արտանետումներ փորման-բեռնման աշխատանքների ժամանակ,
- արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման և երթնեկության ժամանակ,
- բենզինի գոլորշի,
- արտանետումներ զոդման աշխատանքների ժամանակ:
- օդի աղտոտում հողի հանման և բեռնման և շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

(բ) Ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ

Ընդհանուր առմամբ, շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները նվազագույն կլինեն, քանի որ Ծրագիրն ուղղված է ջրային ռեսուրսի կառավարմանը: Սակայն հնարավոր է, շինհրապարակներում պահեստավորված շինարարական նյութերով, շինարարական հոսքաջրերի առաջացում, ինչպես նաև շինարարության ընթացքում աշխատողների կենսագործունեության արդյունքում տնտեսա-կենցաղային հոսքաջրերի և պինդ թափոնների առաջացում:

(գ) Ջրօգտագործում և ջրահեռացում

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է վարչական աշխատողների և բանվորների խմելու, կենցաղային/տնտեսական նպատակների համար, ինչպես նաև շինարարական հրապարակների ջրցանի, տրանսպորտային միջոցների սպասարկման համար:

Ջրցանի համար նախատեսված ջուրը բերվելու է ջրցան մեքենաների միջոցով, իսկ խմելու համար ջուրը բերվելու է այդ նպատակի համար նախատեսված տարողություններով:

Շինարարության փուլում կենցաղային կեղտաջրերը հավաքվելու են անջրանցիկ նյութերից կառուցված կեղտաջրերի հավաքման հորում /ԿՀՀ/, որը շինհրապարակի երկարությամբ պետք է տեղափոխվի: Նախատեսվում է

շաբաթական մեկ անգամ հատուկ մեքենաներով արտահանել հորի պարունակությունը տեղական մարմինների հետ համաձայնեցված կոյուղու կոլեկտոր:

Վերը նշված ազդեցությունը կկրի ժամանակավոր բնույթ, սակայն կմեղմացվի Հավելված 1- ում՝ Բնապահպանական կառավարման պլանում, ներկայացված միջոցառումների ժամանակին և պատշաճ իրականացման արդյունքում:

(դ) Հողային աշխատանքներ

Խրամուղիների փորման աշխատանքները կարող են ժամանակավոր վնասակար ազդեցություն ունենալ հողային ծածկույթի և շրջապատող բուսական ծածկույթի վրա: Հանված գրունտի պահպանման հետևանքով, մինչև ետլիցք կատարելը կարող է վնասվել շրջակա տարածքի հողային ծածկույթը:

Նախագծման և նախնական գնահատման փուլում խրամուղու երկայնքով իրականացվել են ակնադիտական հետազոտություններ, որոնց արդյունքում խրամուղու երկայնքով կենդանիների բներ չեն հայտնաբերվել:

Պահանջվում է խրամուղու տարածքի երկայնքով հանված գրունտը տեղադրել այդ նպատակի համար նախատեսված վայրում՝ անմիջապես փորված խրամուղու երկայնքով:

Օգտագործվող շին. տեխնիկայի, տրանսպորտային միջոցների և դրանց առանձին հանգույցների շարքից դուրս գալու/վթարման դեպքում դրանց նորոգումները պետք է իրականացվեն հատուկ մասնագիտացված կետերում/արհեստանոցներում:

Ըստ բուսաբանական հետազոտությունների, ծրագրի համար նախատեսված տարածքներում հանդիպող բուսատեսակները ընդգրկված չեն ՀՀ Կարմիր Գրքում:

(ե) Շինարարական նյութերի հանում

Շինարարության համար պահանջվող նյութերը նախընտրելի է ձեռք բերել արտոնագրված մատակարարներից և շահագործվող աղբյուրներից:

(զ) Շինարարական թափոնների առաջացում

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, ծրագրի ազդակիր տարածքներում առաջացող տարբեր տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա, մասնավորապես՝ առաջացնելով լանդշաֆտի փոփոխություն, աղտոտել ջրային և հողային ռեսուրսները և մթնոլորտային օդը, ինչպես նաև ազդել մարդկանց առողջության վրա:

Թափոններ կարող են առաջանալ քիչ քանակությամբ մնացորդային հողային զանգվածների տեսքով, քանի որ փորված հողի և բուսահողի հիմնական մասն օգտագործվում է ետլիցք կատարելու համար: Թափոնների մյուս տեսակները, որոնք առաջանում են ընդհանուր շինարարական գործողություններից, նույնպես ենթադրվում են ոչ մեծ քանակությամբ և կարող են ներառել՝ մետաղական և պլաստիկ դատարկ տարաներ, շինարարական աղբ, շինհրապարակներում

հավաքված կենցաղային աղբ, ինչպես նաև վտանգավոր թափոնների տեսակներ, օրինակ՝ վառելիքաքսուկային յուղեր, ներկեր և լուծիչներ:

9.1.2 Սոցիալական ազդեցությունները շինարարության փուլում Շինարարության

հետ կապված ժամանակավոր ազդեցություններն են. **ա. երթևեկության աճ**

Համայնքում սպասվում է կարճաժամկետ երթևեկության աճ՝ կապված շինարարական տրանսպորտային միջոցների շարժման և մեքենաների շահագործման հետ: Սա կարող է արգելափակել ճանապարհները:

բ. աղմուկ և փոշի

Մեքենաների աշխատանքը կառաջացնի փոշի և աղմուկ, որը կարող է առողջական խնդիրներ առաջացնել համայնքում:

գ. առողջական խնդիրներ

Շինարարության ընթացքում անորակ և անհամապատասխան շինանյութերի օգտագործման արդյունքում աշխատողների առողջությանը կարող է վնաս հասցվել:

դ. պատահարներ շինարարական հրապարակում

Շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության կանոնների խախտման պատճառով տեղի ունեցած պատահարները կարող են մարմնական վնաս հասցնել շինհրապարակում գտնվող անձանց, երբեմն նույնիսկ մահացու հետևանքներով:

Ժամանակավոր տեղական զբաղվածություն

Շինարարության փուլում դրական սոցիալական ազդեցությունը հանդիսանում է տեղի չորակավորված աշխատուժի ժամանակավոր զբաղվածության հնարավորությունը:

Շինարարական ճամբարներ

Շինարարական ճամբարները պետք է տեղադրված լինեն համայնքային հողերում, ինչը նախապես պետք է համաձայնեցված լինի համայնքի հետ՝ մասնավոր հողերի օգտագործումից խուսափելու համար: Սակայն, եթե չօգտագործվող համայնքային հողերը մատչելի չլինեն, հողի սեփականատեր համայնքի հետ պետք է կնքվի վարձակալության համաձայնագիր:

9.2 Մեղմացման և փոխհատուցման միջոցառումներ

Ծրագրի նախագծման և շինարարության փուլերի համար նախատեսված են մեղմացնող միջոցառումներ, որոնք կձեռնարկվեն իրականացնող մարմինների կողմից՝ վերը նշված բնապահպանական և սոցիալական հնարավոր բացասական ազդեցությունները կանխարգելելու և/կամ մեղմացնելու համար:

Բնապահպանական և սոցիալական մեղմացնող միջոցառումների իրականացման պահանջները կներառվեն տեխնիկական մասնագրերում և մրցութային

փաստաթղթերում: Այդ միջոցառումները կիրականացվեն շինարարության կապալառուի կողմից՝ հնարավոր ազդեցություններից խուսափելու, դրանք կանխարգելելու, մեղմացնելու կամ շտկելու համար:

Բնապահպանական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում

Շինարարության փուլի ընթացքում լանդշաֆտի վատթարացումը, հողերի էրոզիան, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների և հողերի աղտոտումը կանխարգելելու և/կամ նվազագույնի հասցնելու համար նախատեսված համապատասխան միջոցառումները պետք է իրականացվեն կապալառուի կողմից: Այդ աշխատանքները ներառում են՝

- Արդեն իսկ գոյություն ունեցող թափոնների հեռացման վայրերի օգտագործում (նախագծման փուլում ձեռք բերված համապատասխան թույլտվություններում և համաձայնագրերում ամրագրված պայմանների համաձայն), թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի հստակ սահմանում (այնպես, որ այդ վայրերը որևէ վնաս չհասցնեն բուսածածկին և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչներին), որոնք պետք է պահպանվեն շինարարության կապալառուի կողմից:
- Խախտված տարածքների վերականգնում բերելով սկզբնական վիճակի (աշխատանքները սկսելուց առաջ գրունտը հանել և պահել համապատասխան վայրում):
- Վառելիքաքսուկային և քիմիական նյութերի պահեստավորման վայրերի կահավորում համապատասխան պարագաներով՝ հողերի և շրջակա տարածքների աղտոտման վտանգը նվազեցնելու համար:
- Երթևեկության և շինարարական հրապարակների մուտքի և ելքի սկզբունքների ապահովում՝ սահմանելով հստակ երթուղիներ, կայանման վայրեր և աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Կենսաբազմազանության վրա ազդեցությունը մեղմացնելու նպատակով հարկավոր է՝

- Բացառել ազդեցությունը շրջակա տարածքի բուսականության վրա՝ հողային աշխատանքների հիմնական մասը պլանավորելով և իրականացնելով վեգետացիոն ոչ ակտիվ ժամանակաշրջանում:
- Սահմանափակել բնական միջավայրերի խախտումը՝ շինարարական գործողությունների համար հատկացնելով նեղ միջանցք խողովակաշարի ուղեգծով: Արգելել տեխնիկական միջոցների/սարքավորումների տեղաշարժը և շինանյութերի/թափոնների տեղադրումը խողովակի սպասարկմանն գոտուց դուրս,
- Խստորեն վերահսկել հանդիպող բուսականության մաքրումը խողովակաշարի ուղեգծի երկայնքով՝ սահմանված միջանցքից դուրս ազդեցությունները կանխելու համար,

Կենդանական աշխարհի վրա ազդեցությունը մեղմացնելու նպատակով բացառել՝

1. գիշերային ժամերին մեքենամեխանիզմների լուսավորությամբ կամ այլ

լուսավորության կիրառմամբ աշխատանքները,

2. տրանսպորտային շարժն ԱՊ-ում՝ հատկապես Պարկի պահպանության օբյեկտ հանդիսացող կարևոր կենդանատեսակների բազմացման շրջանում,

3. շինարարական աշխատանքները ԱՊ-ի պահպանման գոտու այն տեղամասերում, որոնք հանդիսանում են կարևոր կենդանատեսակների բնադրավայրեր կամ միգրացիոն ուղիներ:

Շինարարական հրապարակում առաջացած փոշու և աղմուկի նվազեցման միջոցառումներ՝ հատկապես այն դեպքում, երբ աշխատանքներն իրականացվում են բնակելի և հասարակական վայրերի մոտ: Այդ նպատակի համար շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման համար անհրաժեշտ է օգտագործել փակ կամ ծածկով բեռնատար մեքենաներ: Հողային աշխատանքները կատարել փոշեորսիչով կահավորված տեխնիկական միջոցներով և սարքավորումներով: Տրանսպորտային միջոցները և տեխնիկան պետք է պարբերաբար ստուգել, կարգավորել և ապահովել ձայնի խլացուցիչներով: Շինհրապարակներն ու մոտեցնող ճանապարհները պետք է պարբերաբար ջրվեժ, իսկ պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածները խոնավացվեն փոշին նվազեցնելու նպատակով (բացի ձմռանից և տեղումներով առատ ամիսներից):

Շինհրապարակի որակը, բանվորական հագուստի մշակույթը, անվտանգության կանոնների պահպանումը պետք է կազմակերպվի և մշտադիտարկվի համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

Քուսատեսակների պահպանություն

Շինարարական աշխատանքներն իրականացնելիս շինարարը կառաջնորդվի այնպիսի սկզբունքներով, որ բացառվի ԴԱՊ-ի տարածքում որևէ ծառաթփուտային բուսականության հատումը և հնարավոր բացասական ազդեցությունների առաջացումը:

9.3 Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում

Շինարարության հետ կապված ժամանակավոր ազդեցություններ

Շինարարության կապալառուն պետք է պատշաճ կերպով տեղեկացնի

ազդակիր համայնքին՝ շինարարական աշխատանքների սկսվելու մասին, որի արդյունքում կարող են ժամանակավորապես փակվել ճանապարհները կամ խոչընդոտներ առաջանալ ճանապարհներին, փոշու և աղմուկի մակարդակը կարող է ավելանալ, ճանապարհները ժամանակավորապես կարող են փակվել և կարող են խոչընդոտներ ստեղծվել: Նման ազդեցությունները մեղմելու նպատակով կապալառուն կիրականացնի հետևյալ միջոցառումները.

ա. երթևեկության աճ

Կապալառուն համայնքին կառաջարկի շինարարական տեղամասը շրջանցող ճանապարհ:

բ. մուտքի արգելափակում

Կապալառուն շինարարական ճամբարները, շինարարական տեղնիկանկտեղադրի բնակավայրից հեռու, հանրային կառույցների, մասնավոր գույքի և/կամ հողերի մուտքը չարգելափակելու համար:

գ. աղմուկ և փոշի

Շինարարության և սարքավորումների աշխատանքի հետևանքով առաջացող փոշու և աղմուկի ազդեցությունը մեղմելու նպատակով հարկավոր է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները և բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,
- խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում:

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Աղմուկի մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *ԲԿՊ-ում* (Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարում):

Բնակավայրերում աշխատանքներ իրականացնելիս, կիրառել փոշու կառավարման տեխնոլոգիաներ: Մթնոլորտի գետնամերձ շերտում արագ ցրման հետևանքով արտանետումները չեն գերազանցի թույլատրելի նորմերը, ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված միջոցառումների իրականացմամբ, քանի որ նախատեսվող գորշոնեությունն իրականացվելու է բաց տարածքում, քամու միջին արագության պայմաններում արտանետումները ենթակա են արագ ցրման: Մթնոլորտային օդի պահապանությանն ուղղված բնապահպանական միջոցառումների համալիր ցանկը բերվում է ԲԿՊ-ի՝ Մթնոլորտային օդի աղտոտում և կառավարում ենթաբաժնում:

դ. առողջական խնդիրներ

Աշխատողների շրջանում ալերգիկ, շնչառական և այլ առողջական խնդիրներ

չառաջացնելու նպատակով, կապալառուն պետք է կիրառի միջազգային չափորոշիչներին համապատասխանող շինանյութեր:

ե. Շինարարական աշխատանքների հետ կապված անվտանգության ռիսկերը
նվազեցնելու կամ դրանցից խուսափելու համար, առաջարկվում են հետևյալ մեղմացնող միջոցառումները.

- բարձրացնել իրազեկվածությունը շինարարական աշխատանքների ժամանակ բացասական ազդեցությունների վերաբերյալ,
- ապահովել, որ բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահովված լինի և օգտագործի անձնական պաշտպանիչ արտահագուստ,
- ապահովել, որ բանվորները տեղամասի անվտանգության վերապատրաստում ստանան
- ապահովել, որ խոշոր սարքավորումներ աշխատեցնողները պատշաճ կերպով վերապատրաստված և լիցենզավորված լինեն,
- ապահովել, որ շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն,
- ապահովել, որ շինարարական տեխնիկան օգտագործվի խստորեն հետևելով շահագործման հրահանգներին,
- ունենալ առաջին օգնության բժշկական փաթեթներ և հակահրդեհային սարքավորումներ,
- աշխատանքային ժամերից դուրս արգելել գործունեությունը տեղանքում,
- ապահովել, որ ակտիվ աշխատանքային տարածքները լինեն ցանկապատված, այնպես որ երեխաները, մարդիկ չկարողանան մուտք գործել և վնասվել:

Հողերի ժամանակավոր օգտագործում

Շրջակա տարածքների հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել շինհրապարակում՝ բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել՝ տարածքը բերել նախկին տեսքի, մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. Ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

9.4 Դրական սոցիալական ազդեցություններ

Հաղարծին և Աղավնավանք բնակավայրերի ջրագծի կառուցման աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ դրական սոցիալ-տնտեսական ազդեցությունները.

- ջրօգտագործողների ջրամատակարարման պայմանների և կենսամակարդակի բարելավում
- գյուղատնտեսական հողերի օգտագործման մակարդակի բարձրացում
- գյուղատնտեսական արտադրության արդյունավետության և արտադրողականության բարձրացում
- ոռոգման ջրի առավել արդյունավետ օգտագործում
- խոցելի և աղքատ բնակչության հնարավորությունների ընդլայնում
- ազդակիր համայնքների բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում:

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բարելավել նաև առավել խոցելի խավերի սոցիալական պայմանները: Ծրագիրը դրական ազդեցություն կունենա ջրամատակարարման համակարգի ազդեցության գոտում գտնվող Թեղուտ բնակավայրի բնակչության վրա՝ խթան հանդիսանալով նրանց սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը:

9.5 Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

Շինարարական աշխատանքների ժամանակ հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով շինարարական տեղամասում պարբերաբար կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:
- մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության

կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:

- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես անվտանգության սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ):
- աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովվեն խմելու ջրի, կենցաղային կեղտաջրերի հեռացման և հանգստի կազմակերպան պայմանները և այլն:
- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում:
- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի համայնքի բժշկական հաստատությունը:
- Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրառվեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:
- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

Շինարարական աշխատանքների ժամանակ հակահրդեհային

միջոցառումների նպատակով անհրաժեշտ է՝

- շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվեն հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում / պատրաստվածություն:
- Շինհրապարակում գտնվող ավտոտրանսպորտային միջոցների և տեխնիկայի կայանման վայրերը պետք է համալրված լինի հակահրդեհային սարքավորումներով, միջոցներով:
- Շինհրապարակում նախատեսել հրշեջ հիդրանտի տեղադրում, հրդեհաշիջման համար ապահովել ջրադրյունների ճանապարհների և անցումների

ազատ ելքերը, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

- Տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ, մշտապես իրականացնել արտադրական հրապարակի, աշխատանքային հրապարակների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- Օգտագործվող շին. տեխնիկայի, տրանսպորտային միջոցների և դրանց առանձին հանգույցների շարքից դուրս գալու/վթարման դեպքում դրանց նորոգումները պետք է իրականացվեն հատուկ մասնագիտացված կետերում/արհեստանոցներում:

- Նշանակել պատասխանատու, որի պարտավորությունների մեջ կմտնի հակահրդեհային միջոցառումների կիրառումը:

- Մշակել «Արտակարգ իրավիճակների ռիսկը կանխելու կամ հնարավորչափով նվազեցնելու գործողությունների ծրագիր», որն իր մեջ կներառի անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ իրականացվող միջոցառումները և հրդեհային անվտանգությունը:

- Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովվման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

9.6 Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմացումը շահագործման փուլում

Հիդրոտեխնիկական հանգույցների կանխարգելումը հեղեղումներից

Ջրագծերի շահագործման ընթացքում հիմնական բնապահպանական ռիսկը կապված է խողովակաշարի խցանման և խափանման հետ: Այդ երևույթը բացառելու համար, անհրաժեշտ է մշտապես հետևել խողովակաշարերի աշխատանքին և վերահսկել անցողունակությունը՝ խցանումները, հեղեղումներն ու համակարգի վնասվածքները կանխարգելելու համար:

Ալկալիացման, աղակալման և էրոզիայի կանխարգելում

Ջրանցքների սպասարկման տարածքում հնարավոր է էրոզիոն և ճահճացման ռիսկերի առաջացում, որոնք կարող են հանգեցնել հողերի աղակալմանը և ալկալիացմանը: Համակարգի ենթակայության տակ գտնվող հողատեսքերում էրոզիոն երևույթները կանխելու նպատակով անհրաժեշտ է մշակովի ոռոգվող հողատարածքներում հողը մշակելիս իրականացնել հակաէրոզիոն

միջոցառումներ: Լանջերի հորիզոններով առաջարկվում է կիրառել մշակաբույսերի խիտ ցանք, ակոսավորում և թմբավորում, իսկ ոռոգումը կատարել սահմանված նորմերով՝ կարճ ակոսներով:

Տարածքներին բնորոշ չեն գրունտային ջրերի բարձր մակարդակը: Քանի որ այդ տարածքները հակված չեն ճահճացման, պետք է փաստել, որ ավելորդ ջրերը հողամասերից ժամանակին կարող են հեռացվել:

Ոռոգման ջրի որակի պահպանում

Ջրանցքների միջոցով մատակարարվող ջրի որակը կախված է ջրաղբյուրից: Ջրի որակի մոնիտորինգը պարբերաբար իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Հիդրոոդերևութաբանական մոնիթորինգի կենտրոնի (ՇՄՀՄԿ) կողմից ընտրված նմուշարկման կետերում:

Ջրի որակի մոնիտորինգի տվյալները տեղադրվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (<http://www.mnp.am>) և ՇՄՀՄԿ-ի կայքերում (<http://www.armmonitoring.am>) և հասանելի են շահագրգիռ կողմերի համար: Տեղեկատվությունը թարմացվում է ամեն ամիս: ԶՕԸ-ն պետք է հետևի կայքերում տրամադրված տեղեկատվությանը և տեղեկացնի համայնքի ղեկավարներին ջրի որակի փոփոխությունների մասին:

Ոռոգման ջրի որակի շոշափելի վատթարացման դեպքում ԶՕԸ-ն պետք է դիմի Շրջակա միջավայրի նախարարությանը և/կամ տեղական ղեկավարամարմիններին՝ աղտոտման աղբյուրները բացահայտելու և հողերի վերականգնման համապատասխան միջոցառումներ նախաձեռնելու համար:

Շահառու համայնքի ոռոգման ջրի մատակարարման համար պատասխանատուները պետք է ապահովեն համայնքների ներսում բոլոր ջրօգտագործողների միջև՝ հաշվի առնելով ոռոգվող մշակաբույսերի ջրապահանջը:

10. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նախագծման փուլում նախագծման խորհրդատուն ծրագրի ազդակիր համայնքներում ուսումնասիրություններ և քննարկումներ է անցկացրել հիմնական ելակետային տվյալներ ձեռք բերելու, ինչպես նաև ծրագրի սոցիալական ազդեցությունը գնահատելու նպատակով: Խորհրդատուն նաև իրականացրել է հանրային քննարկումներ ազդակիր համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Այդ խորհրդատվությունների նպատակն է իրազեկել ազդակիր համայնքին/բնակավայրին նախագծի վերաբերյալ, ներկայացնել նախագծային լուծումները և նախագծին առնչվող հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցություններն ու դրանց մեղմացնող միջոցառումներն, ինչպես նաև տեղեկություն տրամադրելու արդյունքում իմանալ համայնքների մտահոգությունները և կարծիքները՝ նախագծման փաստաթղթերը ավարտին հասցնելու ժամանակ դրանք հաշվի առնելու նպատակով:

<<ՇՄԱԳ և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն, սույն նախատեսվող գործունեությունը ենթակա է նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման և փորձաքննության և այդ համատեքստում ևս նախատեսվում են ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ անցկացնել հանրային քննարկումներ:

ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ 3-րդ հանրային քննարկումները կազմակերպվել են 2023թ-ի օգոստոսի 29-ին ժամը 12:00-ին Դիլիջան համայնքի Աղավնավանք վարչական միավորում (առաջին փողոց, շենք 59), որի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է <<Առավոտ>> օրաթերթում 2023թ-ի օգոստոսի 22-ի համարում:

11. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցությունը մոտակա բնակչության վրա բացասական ազդեցությունները ինչպես նշվել է հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ և կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ)՝ նախատեսված սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

Տեխնիկական վերահսկողը պետք է իրականացնի ամենօրյա հսկողություն, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողը պարտավոր է ժամանակին տեղեկացնելու կապալառուին նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Նախատեսվող գործունեության շինարարությանն և շահագործմանը ներկայացվող հիմնական պահանջների թվում է ապահովել մարդկանց առողջության համար բարենպաստ պայմաններ և շրջակա միջավայրի որակի նորմատիվային պահանջները:

Դրանք են.

- Պահպանել մթնոլորտային օդը, մակերևութային և ստորերկրյա ջրերը, հողն ու ընդերքն աղտոտող վնասակար նյութերի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաների սահմանները.

- Չգերազանցել վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունները արտանետումներում և արտահոսքերում.

- Չգերազանցել աղմուկի, վիբրացիայի, էլեկտրամագնիսականության, ռադիացիոն ճառագայթման և այլ ֆիզիկական ազդեցությունների սահմանային թույլատրելի մակարդակները.

- Պահպանել հողերի գոտևորման ռեժիմները, քաղաքաշինական կանոնները, գյուղատնտեսական հողերի պահպանության կանոնները, սանիտարական պաշտպանիչ գոտիների սահմանված չափերը.

- Բարելավել բնակչության և նրա առանձին խմբերի սոցիալական, առողջական վիճակը բնորոշող ցուցանիշները:

Այս նորմատիվները պահպանելու դեպքում համարվում է, որ նախատեսվող գործունեությունը չի խախտում բնական հավասարակշռությունը: Դրան հասնելու համար նախաձեռնողը ներկայացնում է բնապահպանական և սոցիալական մեղմման միջոցառումների պլան:

Բնապահպանական և սոցիալական մեղմման միջոցառումները, պատասխանու կատարողներով, անհրաժեշտ ծախսերով բերված են սույն հաշվետվության բնապահպանական կառավարման պլանում /ԲԿՊ/: ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

12. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից

կիրականացվեն մոնիթորինգի ստուգայցեր (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիթորինգի ստուգաթերթիկում:

Շրջակա միջավայրի մշտադիտարկումը /էկոլոգիական մոնիթորինգը/ շրջակա միջավայրի բաղադրիչների, բնական էկոլոգիական համակարգերի, նրանցում ընթացող գործընթացների, դրական և բացասական տեղաշարժերի համալիր դիտարկում է, որը թույլ է տալիս գնահատել և կանխատեսել շրջակա միջավայրի իրավիճակի փոփոխությունները: Էկոլոգիական մշտադիտարկման նպատակներն են. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և նորմավորումը, ազդեցության աղբյուրների վերահսկումը /արտանետումները, ֆիզիկական ազդեցությունը, մնացորդային ազդեցությունը, վտանգները/, շրջակա միջավայրի բաղադրիչների որակի վերահսկողությունը: Այս ամենը անհրաժեշտ է ազդակիր համայնքների բնակչության անվտանգության և առողջության, աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման, ռացիոնալ բնօգտագործում և բնապահպանություն ապահովելու համար:

Մշտադիտարկումը իրականացվում է շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ՝ մակերևույթային ջրեր, մթնոլորտային օդ, հող, կենսաբազմազանություն, սոցիալական միջավայր: Զրազծի կառուցման ընթացքում մշտադիտարկման ծրագրով նախատեսվում է արտաքին զննման եղանակով դիտարկել հողաձածկը, կենսաբազմազանությունը, մակերևույթային ջրերը, մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիան և ֆիզիկական ազդեցությունների մակարդակը:

Շինհրապարակի համար առաջարկվող մոնիթորինգի միջոցառումները հետևյալն են՝

1. Մթնոլորտային օդի որոակի մոնիթորինգ՝ ամիսը երկու անգամ,
2. Շրջակա տարածքների հողային ծածկույթի մոնիթորինգ՝ ամիսը մեկ անգամ,
3. Կենսաբազմազանության մոնիթորինգ՝ շին/ժամանակահատվածում մեկ անգամ,
4. Տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,

Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝ 5 մգ/մ^3 , ազոտի երկօքսիդի համար՝ 0.2 մգ/մ^3 , մրի համար՝ 0.15 մգ/մ^3 :

Ստորև ներկայացված է բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսված մշտադիտարկումների իրականացման պլանը:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակարարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի վնասումները պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Մասնագիտացված կետ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերի հետլիծք	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետ

	- համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ				տարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ընթացքում	Կապալառու,

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով,

		(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:
Աղմուկի և թրթռումների կառավարում	Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ	- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը, - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը: - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից


		- Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;
Կենսաբազմազանության		շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կոյտավորվելու է պաշտպանված

պահպանում		վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար, - ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի , - ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն: - բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր: - շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով: Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձմադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:
-----------	--	---

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:
13. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
14. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
15. 29.01.2010թ. «ՀՀ կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71–Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն

Հավելված՝



Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները և «Դիլիջան» ազգային պարկի տեղադրությունը

Մասշտաբ 1:1500000

